



ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ	Աշխատութեան խնդիրը	ԵԱՆՔԻՆ
ՊԱՏՄԱԿԱՆ	Ազգային նշխարներ	Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ
ՆՈՐԱՎԷՊ	Կրօններ քոյրը (ԺԻՎԼԻՆ ՊԵՐ ՏԸ ԹԻՎԻՔ	
ԲԱՆԱՍՏԵՂԻՄԱԿԱՆ	Վերստին ի Գաղղիա մոնեկուս պաշտօն (Վ. ՀԻԿՈ)	Հ. ՔԻԼՃԵԱՆ
	Թարգմ.	
ՔԱՂԱՍԺ ՇԱՐԼՐՈՅ	Արտաքին, Ներքին, Ազգային	Մ. ՉՈՊԱՆԵԱՆ
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ	(Կղզիէ տը Մանթերէն) Թարգմ.	

ՊԱՅՄԱՆ Ք ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ	տարեկան	Կէս ոսկի Օսման .
»	վեցամսեայ	Քառ » »
Գաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դան. արծաթ
Մէկ թերթին գինն է	»	60 փարայ

Մասիսի Խմբագրութեան վերաբերեալ ո՛ր է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ



Կ. ՊՈԼԻՍ
ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ԳՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 5 Յուլիս

ԸՆԹԱՅՔ ՓՈՍԱՆԱԿԱՐՈՅ

3 ամիս Լանարայի վրայ պանքայի	410 7/8
3 » » » (վճռակն)	410 1/2
3 » Բարիի » (պանքայի)	22 80
3 » » » (վճռակն)	22 87 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Գոմսօլիտե

Երեկ երեկոյ քոչ . (Միաց. D. Սէ Կ)	47 26
Պորսային գոցուեղէն վերջը »	47 28
Բերայի մէջ »	—
Առաւօտուն բացուեցաւ »	47 31
Բարձրագոյն քին »	47 31
Նուազագոյն »	47 30
Կէս օրին »	47 30
Փոխառութիւն 1858) A. Սէրի Գ. Կ. Ա. Ո. 31	
» 1862)	
» 1860)	
» 1863) B. » Գ. Կ. » »	47 30
» 1872)	
» 1865)	
» 1869) C. » Գ. Կ. Բ. »	47 50
» 1873)	

ԻՆՏԻՖԻԷ ԵԳԻՍՏԱԿԱՆ

Երեկ երեկուն գոցուեցաւ	70 30
Եւ առաւ բացուեցաւ Գ. Կ.	71 5
Կէս օրին	71 2 1/2

ԲԱԺՆԵՏՈՐՍՔ

Սօրիէթէ Ժէնէրալ..... Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3 47
Բրէտի Ժէնէրալ..... » » Օսմ. »	6 30
Պանք ալ Գանս..... » » » »	4 30
Սոս. Շանժէ Ժալէօր..... » » » »	3 30
Թրամուէյ..... » » » »	290
Բուժէրի երկաթուղի..... Շը.	41 875
Օպիկտսիօն ալ Բրիօրիթէ..... »	—
Բաժնեթուղթ Լաւրիօմբ..... »	60

ԸՆԲԱՅՔ ՂՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի..... ՂՐԶ. ...	400
Օ Ֆրանքոնոյ..... » ...	87 33
Անգլիական ոսկի..... » ...	140 22
Բօլ Իմբէրիալ..... » ...	90 40
Քրիմից..... » ...	51 45
Բուլղարի թղթադրամ..... » ...	9 5
» արծաթ..... » ...	89 30
Ֆիօրին..... » ...	8 38
Մէճ. արծ. (տարբ.)..... » ...	408 2
Վէցնոյ..... » ...	402 35

Հինգնոյ..... » ...	402 30
Մէթալիք..... » ...	98 20
Պղինձ..... » ...	—
Բողթադրամ..... » ...	—

ԵՐԵՐԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լուստն, 16 Յուլիս, Ժամ 5 վայր. 15 Երեկոյ

Անգլ. քոնսօյիտե.....	99 7/16
Օսմ. » Սէրի Գ. բացուեցաւ	46 1/8
» » » գոցուեցաւ	46 1/8
» » » Ա.	34 1/2
» » » Բ.	47 5/4
» » » Գ.	46 1/8

Օթօման 1871..... անընթեռնելի	
Փոխառութիւն 1877.....	79 5/4
Պանք Օթօման..... Գուրան Կարաժ	40 7/8
Բուսական փոխառ. 1873.....	92 1/4
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ).....	64 1/2
» առանձն. (Բրիտիշ Բիէ).....	85 5/4
Տայրա Սանիէ.....	61 1/2
Տօմանիալ (Փոխառ. Բօշիլա).....	83 1/2
Հուլիս արական պարտութուղթ 40/0.....	—
Փոխանակութիւն Բարիդի վրայ.....	—

Վ. Իէննա, 16 Յուլիս, Ժամ 4 Երեկոյ

Փոխանակութիւն Լուստնի վրայ.....	125 80
Օսմանեան երկաթուղի.....	20 20

Բարիդ, 16 Յուլիս, Ժամ 3 վայր. 15 Երեկոյ

Ֆրանսական Ոսմթ 4 1/2 0/0.....	109 87 1/2
» 3 0/0.....	80 47 1/2
Օսմանեան քոնսօյիտե Սէրի Գ. բացուեցաւ	46 05
» » » գոցուեցաւ	46 40
» » Սէրի Բ.	47 50
» » Գ.	46 40
Օսմանեան երկաթուղի.....	40 75
» Բէթի Բաժնեթուղթ.....	—

Պանք Օթօման.....	520
Գրէտի Լիօնէ.....	535
» Ֆոնսիէ.....	1316 25
Բաժնեթոմն Լիօնի.....	1243 75
Սուէզի ջրանցք.....	2050
Ռուսական 5 0/0 1877 ի.....	97
Իտալական Ոսմթ.....	94 45
Եգիպտական միացեալ.....	322 50
Սպանիական (արտաքին).....	57 7/8
Բրիօրիթէ Թիւրք.....	380
5 0/0 Հելլենական.....	324 37 1/2
Չէք Լանարայի վրայ.....	25 48

ԲԱՐԻՉ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Փարիզ, 15 Յուլիս, Ժ. 30 Երեկոյ.

Ֆրանսական Ոսմթ 4 1/2 0/0.....	109 90
Օսմանեան Ոսմթ.....	—
Եգիպտական միացեալ.....	320

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 րդ ՏԱՐԻ

1885 ՅՈՒԼԻՍ 6

ԹԻԻ 3777

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 6 ՅՈՒԼԻՍ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ՆԻԻ-ԵՈՐՔ, Յունիս 18

Սդիֆըն Պ. Էլքինս, նշանաւոր Ամերիկացին, քանի մ'օր առաջ հետեւեալ ընտիր տտենաբա-
նութիւնն ըրաւ Միսուրիի համալսարանին մէջ:

Քսան եւ հինգ տարի առաջ, երիտա-
սարդութեան խանդով վառեալ, արտասա-
նեցի այս բեմին վրայէն մարդկային յառա-
ջագիտութեան վրայ հզօր հաւատոյ խօսքեր:
Քառորդ դարու մը փորձը կը գրգէն զիս
կրկնել այս համոզումը. մարդոյ ասպարէզն
ի սկզբանէ անտի ծածկուած է բարեգիտան
և յառաջագիտութեան նշանակներով. մարդ
է այժմ լաւագոյն, խմտեղանգոյն եւ հզօ-
րագոյն քան երբէք . . . :

Աշխարհ երբեք եղած չէ աւելի հարուստ
քան զոր է այժմ ի մասին ամբարեալ եւ
գիտեալ ընչից եւ ստացուածոց, ի մասին
քաղաքակրթութեան գիւրդութիւններու, մը-
շակութեան, հմտութեան եւ գիտութեան,
եւ սիրոյ ու գիտոյ: . . . Քաղաքակրթու-
թիւնը հասած է բարձրագոյն կէտ մը, եւ
լոյս կը տալէ բոլոր երկրագունտին վրայ:
Ափրիկէի մութ երկիրներն այսօր կը քննը-
ւին եւ երեւան կը հանուին, եւ վաղիւ
հոն կ'արշաւեն արուեստ եւ վաճառակա-
նութիւն: Հնդկաստան և ծովու կղզիք տե-
ղի կուտան ազդեցութեան լաւագոյն քա-
ղաքակրթութեան մը քան զոր երբէք ճան-
չած էին: Ամէն երկրի մէջ մարդիկ այժմ

աւելի գիտեն, աւելի ազատութիւն ունին
եւ աւելի իրաւունք կը վայելեն:

Նիւթական յառաջագիտութիւնն որ եղաւ
իննեւտասներորդ դարու մէջ, մանաւանդ
վերջին յիսուն տարիներու մէջ, կը գերա-
զանցէ պատմութեան մէջ բոլոր ժամանակաց
յառաջագիտութիւնը: Եւրոպայի եւ Մի-
ացեալ Նահանգաց մէջ 1850 թուականէն
ի վեր հարստութիւնն աւելցած է երկոս
աւելի արագութեամբ: Մեքենայք բազմա-
պատկած են այնչափ որ միայն Միացեալ
Նահանգաց եւ Անգլիոյ մէջ անոնց արտա-
գրող զօրութիւնը հաւասար է հազար մի-
լիոն մարդոց զօրութեան: Հրքոյէ կըսէ թէ
7,500,000 գործաւորը Անգլիոյ մէջ այժմ
կ'արտադրեն վեց ամսոյ մէջ այնչափ գործ-
որչափ գործ հազիւ կրնար արտադրել դար
մ'առաջ աշխարհի բոլոր գործող զօրութիւ-
նը: Միացեալ Նահանգաց մէջ հարստու-
թիւնն աւելցած է 1850 էն մինչեւ 1884
քառասուն երեք հազար երկու հարիւր քա-
ռասուն միլիոն թալէր: Ըստ Միւլտի, 1850 էն
ի վեր Մեծն Բրիտանիա գրեթէ
եռապատկած է իւր հարստութիւնը, Գա-
ղիա քառապատկած է իւրն, եւ Միացեալ
Նահանգք վեցպատկած են. եւ այժմ մեք
(Ամերիկացիք) արեւու ծագելէն մինչեւ մա-
րը հոնեւն ամէն օր իւր չորս միլիոն թալէր
կ'աւելցունենք մեր ազգային հարստութեան
վրայ: Եւրոպայի եւ Միացեալ Նահանգաց
ամէնօրեայ շահը կը հաւասարի 11,000,000
թալէրի, եւ ժողովրդոց օրական աճման
չափն է 11,000 հոգի միայն: Հաշիւ կ'ըլլայ
թէ այժմ կէս աշխատութեամբ կրնայ ձեռք
բերուիլ ինչ որ 1865ին կրկնապատիկ աշ-
խատութեամբ ձեռք կը բերուէր: Գիտու-
թիւնն արշաւած է բնութեան պետութեան

ամէն կողմն, եւ բնութեան դադունի դուրսութիւնը եղած են ծառայ մարդկային կամաց այնպէս որ այն զօրութիւնը կը կենան այժմ ծառայելու մարդու, ինչպէս « պալատականը կը կենան միապետի մը շուրջը » : Այս միջոցին մեծ յառաջադիմութիւն եղած է քաղաքական եւ մտաւորական զարգացման ճանքուն մէջ : Դպրոցը, բարձրագոյն վարժարանը, տալատտանարանը, հիւանդանոցը, եկեղեցիք եւ բարեսիրական հաստատութիւնը որ ամէն տեղ կը գտնուին, յիշատակարաններ են հետզհետէ աճող զբոսութեան եւ մարդասիրութեան : Իննեւտասներորդ դարն աշխարհի պատմութեան մէջ պիտի փակուի իբրեւ դար նիւթական յառաջադիմութեան : Ներքի չէ՞ արդեօք հաւատալ թէ այս դարը պիտի դնէ հիմն բարոյական յառաջադիմութեան մը ոչ նուազ սքանչելի քսաներորդ դարու մէջ, որոյ դրանդեաց հովանւոյն ներքեւ կը կենանք, եւ յորում բարոյական զօրութիւնը պիտի աճին եւ առաւելուն, եւ մարդ պիտի ըլլայ աւելի ազնիւ, աւելի իմաստուն եւ աւելի մաքուր, այնպէս որ դարուց փառապանծ թափորին մէջ քսաներորդ դարն առնու տեղն իբրեւ դար բարոյական յառաջադիմութեան . . . :

Յառաջադիմութեան այս մեծ թափորին մէջ Միացեալ Նահանգք ի գլուխ կը կանգնին : Այս հարուստ աշխարհի մէջ այս ազգըն (Ամերիկա) է հարստագոյն : 1884ին Միացեալ Նահանգաց մէջ ստացուածոց արժէքն էր 51,670,000,000 թալէր, իսկ Անգլիոյ, մայր և նախանձորք երկրին, ստացուածոց արժէքն էր աւելի քան 6,000,000,000 թալէր պակաս : Կլատտոն յօդուածի մը մէջ ըսած էր . « 1830ի աշխարհագիրը պիտի ցուցնէ թէ Ամերիկեան Հանրապետութիւնն ստուգիւ է հարստագոյն յազգս », եւ Կլատտոն սխալած չէր : Պիգմարք 1882, մայիս 14ին Գերմանիոյ ազգային ժողովոյ մէջ ստալէս խօսած է . « Ազգային բարգաւաճման եւ զարգացման մէջ Միացեալ Նահանգաց յաջողութիւնն արդի ժամանակաց ամենէն փառաւոր յաջողութիւնն է : Ամերիկեան ազգութիւնն ոչ միայն յաջողութեամբ դիմացաւ պատմութեան մէջ ամենէն հսկայական եւ մեծածախ պատերազմի մը եւ խափանեց պայն, այլ եւ անմիջապէս

ետքը կրցաւ դործ հայթայթել իւր ցամաքային եւ ծովային զինուորաց, պարտքին մեծ մասը հատոյց, եւ դործ ու տուն տեղ կրցաւ տալ Եւրոպայի մէջ դործ չգտնող այնչափ մարդոց, եւ այնչափ շուտ որչափ շուտ կրնային հասնիլ անոնք Ամերիկայի մէկ կողմն, եւ այս մեծ ազդն ըրաւ այս ամէնն այնպիսի անուզողակի տուրքերով որ շատ զգալի չեն ժողովրդեան » :

Մինչ մէկ կողմէն պարծանօք եւ հաճութեամբ կը դիտենք յառաջադիմութիւնն զոր ըրած են Եւրոպայի ազգերն եւ մասնաւորապէս Միացեալ Նահանգք, չենք կրնար մոռնալ միւս կողմէն թէ դժգոհութեան մը ուռնչ կը հասնի մեզ : Նոյն իսկ այն ազգաց մէջ յորս յառաջադիմութիւնն այսչափ մեծ եղած է, ընդհանուր անկում մը կայ արուեստից եւ առեւտրոյ, եւ դժգոհութիւն ի մէջ ժողովրդեան : . . . Մինչ կը գտնուինք մեծ հարստութեան մէջ, մինչ ունինք գերազանց զօրութիւններ արտադրութեան, մինչ ունինք նիւթական անհամեմատ յաջողութիւն, կը տեսնենք այսու ամենայնիւ թէ անկում մը կայ արուեստից եւ վաճառականութեան մէջ : Այս առատութեան երկրին մէջ կան շատ տեղեր ուր չքաւորութիւն սկսած է . առանց գործի մնացած են 350,000 գործաւորք, որոց աշխատութեան կը նային աւելի քան մէկ միլիոն կանայք եւ մանկունք՝ իրենց հացին, բնակութեան եւ զգեստուց համար : Արջափ դործաւորք ալ կան որ կէս օր միայն կ'աշխատին կուռեւրով քաղցի դէմ . . . : Շատեր որ դործ ունին՝ մրցման պատճառաւ ստիպուած են ընդունիլ այնպիսի թուականներ որ հազիւ կը բաւեն անոնց ապրուստին : Խորխորատն որ կը բաժնէ հարուստներն և աղքատներն, հետզհետէ աւելի կը լայննայ եւ կը խորնայ . . . :

Այս չարիք աճած են մեր աճելով : Աստիք են մեծաւ մասամբ հետեւանք, հոս ինչպէս եւ Եւրոպայի մէջ, արուեստից եւ աշխատութեան ներկայ դրութեան : . . . Բայց դար մ'ետքը Միացեալ Նահանգք պիտի ունենան 200,000,000 ժողովուրդ : Ուստի արժան եւ կարեւոր է մեզ ըլլութեամբ ըննել թէ շարունակելու ենք այնպիսի դրութեան մը ներքեւ որ թոյլ կուտայ ներկայ շարեաց եւ կը քաջալերէ գործի տի-

րոջ եւ գործաւորին մէջտեղ արուեստի եւ աշխատութեան կռիւ մը, որ ուրիշ աղբաց մէջ չբաւորութեան պատճառաւ ըրած է աւելի զոհեր քան ուրիշ պատերազմներ որ երբէք պղծած են զաշխարհ: Երբ մարդիկ ունեցած չեն բաւական կերակուր, պատըսպարան եւ հանդերձ, մահը քաղած է հարստազոյն հունձ:

Խնդիրը թէ՛ արուեստից եւ աշխատութեան վերաբերեալ եւ թէ՛ ընկերութեան վերաբերեալ խնդիր է, եւ կը վերաբերի ոչ միայն դրամատէրին կամ վարձով աշխատողին, կամ մէկուն աւելի կամ միւսոյն, այլ կը վերաբերի ընկերութեան բոլոր մարմնոյն եւ նոյն իսկ կառավարութեան . . . :

Իմաստութեան գործ չէ հանգարտ նըստիլ եւ յուսալ թէ ընկերական եւ արուեստական (industrial) խնդիրներ ինքնին պիտի կարգադրուին առանց հոգ պատճառելոյ մարդոյ: Դարմանք կուգան ջանքէ եւ պատրաստութենէ ետքը միայն: . . . Բոլոր բարեկարգութեանց մէջ ներկայ սխալմունքն անկեղծութեամբ քննել եւ ճանչնալ եղած է առաջին քայլ, եւ սխալմունքն ուղղելու համար խղճի մտօք ջանալ եղած է երկրորդ քայլ: Ամերիկայի մէջ գերութեան բարձման ջատագովք չգիտէին ինչպէս ի գլուխ հանել գործը զոր կատարել կը փափաքէին, բայց ճանբայ մը գտնուեցաւ: Հարկ եղաւ աւելի քան յիսուն դար կռուիլ եւ ճգնիլ աղատութեան համար մինչեւ որ հասկնալի կերպով ի գիր առնուեցաւ սա պարզ ճշմարտութիւնը թէ «Բոլոր մարդիկ հաւասար են իրարու», եւ հարկ եղաւ մեծ պատերազմ մ'ընել հաստատելու համար այս ճշմարտութիւնը:

Միացեալ Նահանգաց մէջ ստոյգ է թէ թողականներն աւելցած են վերջին քսան եւ հինգ տարիներու մէջ. բայց կենաց պահպանութեան պէտքերն ալ նոյն չափով աւելցած են . . . : Ուստի բոլոր ժամանակաց մէջ ճշմարիտ խնդիրն է հասկնալ ոչ թէ արդեօք գործաւորը կ'ընդունին աւելի քան զոր կ'ընդունէին առաջ, այլ թէ արդեօք կ'արտադրեն աւելի եւ կ'ընդունին իրենց արտադրութենէն աւելի մեծ բաժին քան զոր կ'ընդունէին առաջ: . . .

Բնական հակառակութիւն չկայ դրամա-

գլխոյ եւ աշխատութեան մէջտեղ: Այս երկու գորութիւնք կա'մ ի միասին գործելու են, եւ կա'մ բնաւ գործելու չեն: Հակառակութիւնն է գործի տիրոջ եւ գործաւորին մէջտեղ, եւ յառաջ կուգայ երկուստեք սխալմունքէ: Մէկը կը ջանայ ստանալ այնչափ աւելի աշխատութիւն որչափ կրնայ նուազագոյն վարձով. միւսը կը ջանայ ընել որչափ քիչ գործ որ կրնայ մեծագոյն վարձով: Ասի մրցման օրէնքի միջոցաւ կ'առաջնորդէ շահուց մշատեւ պատերազմի . . . : Այս պատերազմը դադրելու է, ապա թէ ոչ պիտի կործանէ մեր բոլոր արուեստական գրութիւնն, եւ ընկերական գործարանը: Այս խնդրոյն լուծման մեծագէտ կը նպաստէ գտնել միջոցներ որովք գործի տիրոջ եւ գործաւորին շահերը կրնան ըլլալ մի եւ նոյն, եւ արդարութեամբ կը բաշխուի ինչ որ անոնք ի միասին կ'արտադրեն: Դրամագլուխ եւ աշխատութիւն փոխանակ իրարու թշնամի եւ հակառակորդ ըլլալու, իրարու դաշնակից ընկերներ ըլլալու են:

Դարմաններն որ սովորաբար կ'առաջարկուին, ինչպէս են բուռն զօրութեամբ բաժանել ինչք եւ ստացուածք, ընդհանուր ազդին ստացուածքն ընել հողը, ընկերականութիւն եւ հասարակականութիւն այժմ հասկցուած մտօք, չեն դեղ ու դարման ներկայ չարեաց: Եթէ բոլոր ստացուածք հաւասարապէս բաժնուին ժողովրդական մէջ եւ փոփոխութիւն չըլլայ գործի եւ աշխատութեան արդի գրութեան մէջ, անոնք որ այժմ շատ ունին, հաւանականաբար աւելի մեծ բաժին պիտի ընդունին ստացուածոց բաժանումէն քիչ ետքը: Ներկայ գրութեան ներքեւ ըստ օրինի ձեռք բերուած ստացուածոց իրաւունքը երբէք բաժնուելու չէ: Խնդիրն է ձեռք բերել լաւագոյն բաշխում աղաղակի մէջ: Աշխատութեան համար իւր բաժինն ստանալու ժամանակը հարստութեան ստեղծուելէն եւ բաշխուելէն ետքը չէ, այլ հարստութեան ստեղծուելու տեսնն է: . . . :

Ուղղութեամբ ստացուած հարստութիւնն է վարձ սակաւագետութեան, խնայողութեան, անձնուրացութեան, անձնական ջանից եւ անձնական զոհողութեան: Աշխատութիւնն ալ հաւասարապէս արժանի

է վարձուց : Դրամագլուխ եւ աշխատութիւն են մեծագոյն զօրութիւններն ի քաղաքակրթութեան, եւ եթէ ասոնք չըլլային, քաղաքակրթութիւնը պիտի կորնչէր : Երկուքն ալ կը պահանջեն եւ ունենալու են հաւասար աստիճանաւ բոլոր օգնութիւնը, քաջալերութիւնը եւ պաշտպանութիւնը զոր օրէնք կամ անհատը կրնան տալ անոնց : Եթէ դրամագլուխը նեղութեան մէջ է, աշխատութիւնը կը տառապի . եթէ դրամագլուխը թողու երկիր մը, աշխատութիւնն անտի անյայտ կ'ըլլայ . . . : Աշխատութիւնը չկրնար քաղել որ եւ իցէ օգուտ դրամագլուխոյ հարստահարութենէն :

Ոմանք կը ջատագովեն ազատ վաճառականութիւն եւ օտար շուկայներ իրրեւ ճրջմարիտ դարման : Անգլիա ունի ազատ, Միացեալ Նահանգք ունին սեղմեալ վաճառականութիւն : Անգլիոյ մէջ առեւտրական անկումն է աւելի մեծ, եւ գործաւորաց վարձերն են 84 առ հարիւր աւելի նուազ քան Միացեալ Նահանգաց մէջ :

(Միացեալ յաջորդ լեռնայն
ԵԱՆՔԻՆ)

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ՆՇԵԱՐՆԵՐ

(Շար. Գէ. Բէ. 3776)

ՌՄԺԵ (1215) ոչ գոյ խաղաղութիւն . զի միաբանեալ բազում Լեվէֆ վասն սպանման ընկերաց իւրեանց սաստիկ հակառակեցան ի հետ քաղաքին . մարդ ոչ կարէր Ուուու ծայր (քաղքին ծայր) ելանել, զի կապէին տանէին եւ շատ նեղութիւն տային : Նաոս դանձա պահանջէին որ թող տային . այսպէս բազում գիւղս աւերեցին, այնպէս որ ասեն Աշուտցիք, որ շատ ցորեն ելանէր ի դեղանէն, եւ մարդիկն փախեան ոմանք ի Սեբաստիա, ոմանք Ալաճախան, ոմանք աստ եւ անդ ցրուեցան . եւ զապիթն մեր բերեալ Ղարաշորու Գէֆա (քուրդ) շատ, վասն ահէ թշնամեաց, եւ ամառնային ժամանակին սերմանեալ ցորենն լի եւ առատ էր, եւ ի հնձոց ժամանակին լցեալ էին Լէ-

վէնաքն ի գիւղս . յահեանց ոչ կարէր վերակացու շահանին երթալ ի գիւղս . եւ քաղաքացիքն խորհուրդ տարին, եւ զազաներն որ եկեալ էին պէօլիւկ պէօլիւկ արարեալ պահապանս զրկեցին ի գիւղս, եւ պէօլիւկ մի զազա գնացին ի գիւղն Ղարաւար, պատերազմեցան ի հետ թշնամեաց, եւ Լէվէնտն սպանեց զամենայն զազաներն, եւ պէօլիւկ պաշի զազաներուն ի մեր քաղաքէն էր, եւ զնա ըմբռնեցին, շատ նեղութիւնս տվին, եւ ի մէջ կրակին այրեցին, եւ քաղաքացիքն խնայեալ ժողովեցան գնացին ի վերա նոցա . եւ նոքա փախեան աստ եւ անդ, եւ հողադործք որ ոչ կարէին հանել զպատուական ցորենն, վասն այնորիկ ոչ եղեւ լիութիւն քաղաքին . քրիստոնեայք շատ պարտք տուին վասն քաղաքին . ի թագաւորութեան Սուլթան Մուստաֆային, եւ զապիթ քաղաքին մեր Հաճի Օսման, եւ ցորենին քիլէն 9 զրէ էր :

ՌՄԺԶ (1216) ձմեռն եղեւ սոստիկ եւ ձիւն եկեալ յերկնից բազմեց, եւ ի դարնան եղեւ սալաւ սղութիւն : եւ մէջ ամառն կարկուտ եւ անձրեւ եկաւ կրկին եւս, եւ սերմանեալ ցորենն էր սալաւ, զի ոչ գիտէին գիտն Աստուծոյ, այլ չար թշնամիք անօրէնութեամբ . չընեալ կողպտէին զերկիրս ամենայն եւ ի հնձոց ժամանակին տվին լաթեղէն, երկաթեղէն, նալ, մըխ եւս, զոյս ամենայն տղեալ եւ հաշտեցեալ ընդ թշնամիս . եւ այս տարին գնաց եղբայրս Պօլիս, եւ այս տարին բարկացեալ Աստուած ի Պօլսոյ, զի յոյժ եւ սաստիկ եւ յանկարծակի շարժումն եղեւ, քաղաքն ամենայն շատ ահաղին բեալկիր պինա խաներ եւ բարձրագոյն ճամփներ փլեալ, եւ անհուն մարդիկ ի ներքեւ հողին մնացեալ, եւ ամիս մը այսպէս գիւղեր եւ ցորեկ ժամ առ ժամ եղեալ եւ խեղճութիւն նորա տարածեցաւ յերկիրս ամենայն . թագաւորութիւն Սուլթան Մուստաֆային եւ զապիթ քաղաքին մեր Հաճի Օսման, եւ խարձ քաղաքին շատացեալ, եւ ցորենին քիլէն կալոց ժամանակին 10 զուրուշ :

ՌՄԺԷ (1217) ձմեռն եղեւ հանդարտ, եւ գարնան եղեւ լիութիւն, զի հաշտեալ էին ի հետ թշնամի Լէվէնտին վասն հողադործաց, զի երթեալ սերմանեն . եւ յայլ երկրէ եկեալ շատ քէրվան առեւտուրս

եղեւ: Եւ այս տարիս եկաւ մեծ տէտէս Պօլիսու, եւ ամառնային ժամանակի կարգէնց զտառապեալ Յակոբս, եւ կեցեալ ի բարի ամս 105 տարի, հասեալ ալիք ծերութեան, եւ փոխեցաւ բարի դործով առ Աստուած. Տէր լուսաւորեսցէ իւր անձառելի լուսով զհոգիս սորին, ամէն. եւ այս տարիս անցեալ ի վերայ մեր այսպէս:

ՌՄԺԸ (1215) ոչ գոյ խաղաղութիւն. զի ձմեռն եղեւ հանդարտ, եւ գարնան եկեալ անօրէն եւ չար թշնամի Մատաղ օդլուն ութը հարիւր էսկէրով, զի խռովեալ էր ի հետ ամենայն քաղաքաց, ի կողմն արեւելից. եւ կողոպտեալ հինտու մէթահ քէվրան բազում մալօք եւ ապրանք, եկեալ ի քաղաքն մեր, եւ զապիթ քաղաքին պատուէր տվեալ այլազգաց եւ քրիստոնէից զի ոչ առնիցեն փարայով զմալս ի ձեռաց թշնամեաց. եւ այլազգիքն ոչ պահեցին զպատուէրս, գնեցին մալս, եւ չար անօրէնն այն կեցեալ 6 օր ի մէջ քաղաքին, որ գարիին քիլէն մինչեւ 20 զրշ. ելաւ վասն բազմութեան էսկէրին. եւ հետ նորա աւերելով չրջէր ի կողմն արեւելից, եւ նոյն ամսոյն իմացեալ Սեբաստիոյ փաշայն, պատրաստեալ 1000 Տէլի պաշի, թային արարեալ ի վերս նոցա, զի ուր ուրեք գտանիցեն պատերազմին ընդ միմեանս. եւ Տէլիներն կապեցին չորս կողմն լէվէնտին, պատերազմեցան ընդ իրարս ի կողմն քաղաքին մեր. բազում մարդ սպանեցան ընդ երկուցունցն. եւ քաղաքէն մերմէ տվեալ շատ գարի եւ շատ կերակուր թային վասն Տէլիներուն, վասն այնորիկ պարտք քաղաքին շատացեալ, եւ քրիստոնեայքն աստ եւ անգցրուեալ, եւ յաշնան սղութիւն եղեւ, վասն զի հողադործքն ոչ կարացին հնձել ցորեան վասն բռնութեան եւ դառնութեան ժամանակին, զի քօչեցեալ էին բոլոր գիւղօրայքն ի քաղաք: Եւ այս տարիս, կախեցին Գզեր Պարոնեանց մահտէսի Յակոբն տապախանէին կամուրջն վար, վասն դարբիններուն սակաւ դործի համար, որ այնմ ժամանակի հասեալ եղբարքն գիտացին. և այլազգքն տեսեալ վկայեցին թէ լոյս իջաւ ի վերայ նորա. ի թաղաւորութեան Սուլթան Մուստաֆային, եւ զապիթ քաղաքին Հաճի Օսման, եւ ցորենին քիլէն 14 զրշ. եւ պարտքն քաղաքին շատ, սակաւ քրիս-

տոնէից տվին 9 քէսէ պարտք, եւ ես տառապեալս տվի սալեան 6 հարիւր զրշ. եւ անցուցեալ տարիս այս շատ նեղութեամբ եւ վտօք վասն ծովացեալ մեղաց մերոց:

ՌՄԺԹ (1219) ոչ եղեւ երբէք խաղաղութիւն. ձմեռն եղեւ սաստիկ ցուրտ, անձրեւն եկաւ բազում անգամ, սղութիւն եղաւ ամենայն բարեաց. եւ ապրիլ ամիս աւուր երեկոյի միում, սահաթ մը անձրեւ եկաւ սաստիկ առատապէս, եւ Ըղբուպատու լեռնէն շատ ջուր սէլ ելաւ և անկից ի վայր շատ տուն քակեալ եւ եկեալ ի մէջ չարչրին, լըցեալ եւ քարով, որ հասեալ մինչեւ յառիքն, եւս առաւել յցեալ ի մէջ խանութներն ջրով, որ զամենայն լաթեղէնս եւ որ ինչ ամենայն ըռգալս թացեալ ջրով և ճախնով, որ զխղճութիւն մարդկանց ոչ կարեմ պատմել գրով՝ ընթերցողաց եւ լսողաց: Եւ ի մէջ ամառն ելեալ ի դէպ հարաւային կողմէն յերեսս յերկնից նշանաւոր եւ երկայնաչափ մինչեւ 6 կանգուն պայծառափայլ լուսաւոր աստղ մը, որ երեւէր տեսանողաց ահարկու եւ զարհուրելի, եւ կայր ի մօտ նորա մոբրակարմրադոյն եւ կանաչադոյն կրկին աստղ մը. չրջէին ի միասին մինչ ի մէջ գիշերոյ, եւ մտեալ ի ներքեւ երկնից. եւ այսպէս կեցեալ 3 գիշեր եւ այլ ոչ ելեալ: Եւ այս տարիս պատրաստեալ Սուլթան Մուստաֆա պատերազմ ի հետ Մոսկովին, խաբար աղարկեալ ռորտոս տիեզերաց իւրոց, վասն զօրու, զի գնացեն պատերազմ թաղաւորին. խառնակում էր ամենայն տեղիս, եւս առաւել ի մեր քաղաքն, զի յոյժ նեղէին գլխատոնեայ ազգն վասն ինչքի եւ այլ չար դործի համար. եւ այս տարիս այսպէս անցեալ վասն մեղաց մերոց:

ՌՄԻ (1220) ոչ եղեւ խաղաղութիւն յամենայն տեղիս, վասն պատերազմի թաղաւորաց զի հրաման թաղաւորին սաստիկ էր ռորտոս տիեզերաց. եւ բազում զօրք կայր ի վերայ երկրի, եւ լէվէնտ թշնամի հակառակ մեր քաղաքին. եւ զապիթն ժողովեալ զամենայն գունդս գնացին պատերազմեցան ի դուրս քաղաքէն, բերեալ սակաւ գլուխ եւ մարդ, եւ զմարդսն կախեալ, և այլազգիքն որ ոչ երթային սէֆէր վասն լէվէնտնուն համար, եւ թշնամիքն օր ըստ օրէ շատնային, եւ ամառնային ժամանակի եկեալ Պօլսոյ զապիթ Դուռնաճի պաշի, զո-

մանս սէֆէր խրկեց եւ զումանս սպանեց եւ զումանս զապիթ արար, տարի մը այսպէս : Եւ ամառն եկեալ եղբայրն իմ ի Պօլսոյ : Եւ պարտք քաղաքին շատացեալ, եւ քրիստոնեայքն աստ եւ անդ ցրուեալ զի ոչ գոյր վատաւ որ ջանային զպարտսն հատուցանել, վասն այնորիկ նեղութեամբ անցունէին տարիս :

ՌՄԻԱ. (1221) ոչ գոյ երբէք խաղաղութիւն երկրիս ամենայն, զի պատերազմութեաւ գաւորաց սաստիկ էր, ամէն շարաթ մէնզիլ գար քաղաքէ ի քաղաք վասն մարդկանց, զի երթեալ պատերազմեսցին, եւ շատ անօրէն լէվէնտ կայր ի մեր քաղաքն, վասն սպանման ընկերաց իւրեանց աւերէին բազում գիւղորայս : Եւ ամառնային ժամանակին վասն ծովացեալ մեղաց ոչ ցօղեաց անձրեւ, զի յոյժ խորշակահար եղեւ սերմանեալն ցորեան, վասն տօթոյն արեգական : Եւ հողագործքն ոչ ունէին հանգստութիւն ի գետոս իւրեանց, այլ երբեք չըջին աստ եւ անդ, վասն այնորիկ եղեւ սղութիւն ամենայն բարեաց, զի ոչ գայր բէվրան յայլ երկրէ վասն ահին թշնամեաց : Յորենին ըլլէն 10 զուրուշ :

ՌՄԻԲ. (1222) ոչ գոյ երբէք խաղաղութիւն երկրիս ամենայն, զի սաստկանայր սէֆէր տարոց տարի : Եւ քաղաքն մեր յոյժ ձմեռ եղեւ, որ մինչեւ ի գարնանային ամսոյ ձիւն եկաւ շատ անդամ, եւ ամառնային ժամանակի անձրեւ եկեալ առատապէս եւ լէվէնտներուն հետ հաշտեցան հողագործաց համար, զի խառնակում էր ընդ իրարս ամենայն տեղիս : Թագաւորութիւն Սուլթան Մուստաֆային, զապիթ քաղաքին մեր Հաճի Օսման եւ շատ պարտք տըվին՝ սակաւ քրիստոնէից, եւ ես տառապեալս տուի սպեան 75 զրշ, շատ մարդ պարտական եղեալ ի յօտար յերկիրքն անցեալ եւ այսպէս նեղութեամբ անցուցեալ տարիս այս :

ՌՄԻԳ. (1223) ամին ոչ եղեւ խաղաղութիւնն ընդ ամենայն աիեղերս : զի հրաման թագաւորին սաստիկ էր, ահն մօսիւֆին յոյժ նեղէր ամենայն քաղաք, զամենայն մարդ : զի զօրեղութիւն եւ արուստագործութիւն ի նէին ամենայն որ ոչ երթային սէֆէր : Եւ ի այս տարիս անհուն մարդկին բազում մալ եւ շատ ձի ջրին տուեալ ի մեծ գետն թու-

նայ եւ Պոլիս սաստիկ սղութիւն եղեալ որ մինչ երեսուն տիրէմ հացը երկու փարայ եղեալ, որ խաբարն դայր յերկրէ երկիր եւ ի մեր քաղաքն : Ի սոյն տարիս սերմանեալ ցորեանն եւ պտղաբերեալ ծառերն առատապէս եղեալ : Եւ զապիթ քաղաքին ի հընձոց ժամանակին բերեալ բազում ջաղա վասն ահէն թշնամեաց : զի մարդկին երթեալ պահէին զգիւղս ի բոլոր քաղաքին : Եւ ի այս տարիս վասն սպեանի համար հայերն գանդատ դնացին եւ այլազգիքն յետ գործուցին : Թագաւորութիւն Սուլթան Մուստաֆային, եւ զապիթ քաղաքին Հաճի Օսմանն : Եւ ցորենին քիլէն 10 զրշ, եւ եղին յօսան 20 փարայ, ամենայն բարի իւր զկմէթին կէօրէ է : Եւ այս տարիս տառապեալս տուի սպեան 65 զրշ : ամեն ըստ կարեաց տուեալ եւ հատուցեալ զպարտսրն, եւ անցուցեալ տարիս այսպիսի նեղութեամբ :

ՌՃԻԿ. (1224) ամին եւս առաւել ոչ գոյ երբէք հանգարտութիւն : զի ձմեռն յոյժ ցուրտ եւ ի գարնան եկեալ ի յարեւմտից կողմանէն Սախըր փուշտ մի երեք թուղրով, բազում էսքէրով, եւ շատ մալով, կեցեալ ի քաղաքն մեր եօթ օր, շատ խորձ եւ շատ մատրաֆ եղեալ վասն բազում զօրացն, եւ զապիթ քաղաքին յետոյ ժողովեալ զամենայն գունդս իւր, բաշխ արարեալ զպարտսն քաղաքին, յետոյ ժողովեալ քրիստոնէից ինը բէսէ զրշ : սպարտք, որ թէ եւ թէրով 150 տուն էին, այսմ տարուջ ոմանք տունին 150 զրշ, ոմանք տունին 100 զրշ, եւ ես տառապեալս տուի 70 զրշ : այսպէս զամենեւեան բռնադատութեամբ պէս պէս նեղութեամբ հատուցին զպարտս իւրեանց : ոմանք պարտական եղեալ գնացին ի յօտար երկիր, եւ ոմանք չքաւորեալ փախեան ի յօթեվանէն իւրեանց, եւ բազում էսկէր կայր ի վերայ երկրի ամենայն տեղիս, շատ ոմանք երթային եւ շատ ոմանք գային : Եւ գայր ի թագաւորէն զապիթ ամենայն տեղիս վասն էսկէրի : Եւ վասն գանձի : յոյժ նեղէին զքրիստոնէայ եղբարքս ի ահէ լէվէնտին : Եւ վասն պատերազմի, հալածական չըջին : Եւ ի ամառնային ժամանակին փոքր տղայոց վրայ յոյժ ծաղիկ եղեալ սաստիկ ցաւոյն բազում տղայս մեռանէին, եւ այսպէս անցաւ տարիս այս դառն նեղութեամբ :

ՌՄԻԵ (1225) ամին ձմեռն ցուրտ եւ ի դարնան եղեւ սուղութիւն ամենայն բարեաց եւ ի ամառն թշնամի կողոստիչ կեայր եւ ժողովեալ քաղաքն ամենայն եթէ այլազգ եմ եթէ քրիստոնեայ գնացին պատերազմ ի վերայ թշնամոյն ի գիւղն Կասման եւ ի մացեալ նոյն լէվէնտ փախեալ ի գիւղն Զիմառայ, եւ այլազգիքն գնացեալ ի մէջ գիշերոյ որքան թշնամի կեայր ի մէջ գիւղին զամենեւեան ըմբռնեալ չար մահուամբ սատակեցին, բազում մալս առին ի նոցանէ եւ եկեալ ի քաղաք: Եւ յետ նորա եկեալ ի այլ կողմանէ բազում լէվէնտ վասն սպանման ընկերաց իւրոց ի գիւղն Կասման, կողոստեալ զգիւղն, բազում նեղութիւնս տուեալ մարդկանց. եւ կրկին անգամ ժողովեալ քաղաքացիքն գնացին ի պատերազմ ի վերայ նոցա եւ թշնամիքն ըմբռնեալ զմեծամեծ մարդ քաղաքին շատ նեղութիւն տուեալ նոցա, եւ քաղաքացիքն ժողովեալ շատ լաթեղէն եւ երկաթեղէն եւ շատ դանձրս տուեալ նոցա եւ ազատեալ, եւ անօրէնքն զԱստուած ոչ ճանաչելով՝ որպէս չար Կայէն գնացեալ անօրէնութեամբ հրով այրեցին ի գիւղն գեղեցիկ Զիմառայ, որ տեսիլեամբ գեղեցիկ է, ի վերայ դաշտի. ի միջի նորա եղեալ մարդիկն ոմանք տուեալ փախեան Պոլիս, եւ ոմանք այս գիւղ եւ այն գիւղ գնացին: Եւ ի աշնան ժամանակին եկեալ փաշա մը բազում զօրօք գիւղն Բինկան. եւ ի ահէ նորա պատրաստեցին կերակուր երեք աւուր. շատ ձի եւ շատ խլատ առեալ տարան ի գիւղն Բինկան, վասն այնորիկ թէ ոչ հանդիպի ի քաղաքն մեր: Եւ պատերազմն թաղաւորաց յոյժ սաստկանայր ընդ մոսկոփին: Ի թաղաւորութիւն Սուլթան Մուսթաֆային. եւ զապիթ քաղաքին մեր՝ Հաճի Օսմանին. եւ ցորենին քիլէն 12 զրշ. ամենայն բարին նմանապէս. եւ պարտք քաղաքին շատացեալ, զի ոչ կարացին հատուցանել, այլ թողուցին չահով մէջ քաղաքին. եւ մեք երեքեալ եւ տատանեալ բազում նեղութեամբ անցուցեալ տարիս այս:

(Մնացեալն յաջորդ խոսով)

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՅՏՏԱՆՅՏ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՄԱՍԻՍԻ բաժանորդները թերթ 2ՊԵՏԻ ՍՍԱՆՆ յառաջիկայ Օգոստոս 1 է վերջ եթէ իրենց բաժանորդագիրը չ'փութան հասցնել առ Տնօրէնութիւնն, մինչեւ նոյն թուական:

ԱՅՆ ԲԱԺԱՆՈՐԴՔ րոց պայմանաժամը կը լրանայ Օգոստոս 1 ին, պարտին նորոգել զայն անյապաղ, եթէ չ'են փափագիր որ թերթերու առաքումն ընդհատուի:

Տարեկան Բաժանորդագիրն է

ԳԱԼԱՌԱՅ Համար, 69 ղշ հանգերծ թղթատարութեան ծախիւք:

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ Համար, 15 Ֆրնք. նոյնպէս.

ՊՈԼՍՈՅ Համար կէս Ռսկի Օսմ. առանց թղթատարութեան ծախուց:

Գաւառաց եւ Օտար երկիրներու համար վեցամսեայ բաժանորդագրութիւն չ'կայ:

ՆՈՐԱՎ ԵՊ

ԿՐՏՍՆԵՐ ԳՈՅԲԸ

(Շար. և վերջ)

Գ.

Բոլոր մեծ խնամք տարած է իւր արդուարդին. նոր ամիլուած, գորշազոյն թիկնոցակ մ'եւ բաց գոյն տաբատ մը հագած, ու ձեռքը հուրը գաւազան մը՝ մեղմիկ կը յառաջանայ դէպ ի վալթանվյիլ անտառը, Պ. Թրիւմլօի բնակարանին կողմը:

Դեռ առջի օրն անցած էր այն կողմերէն, քննական պոռոյտով մը, յարձակումն ընելէ առաջ վայրերն ուսուսմանսիրելու նըպատակաւ եւ դուցէ այն յուսով որ ճանբուն վրայ հանդիպէր իւր սրտին սիրեցելոյն: Պահ մը, պուրակին փոքրիկ ծառուղեաց միոյն մէջ, կարծած էր նշմարել ի հեռուստ սեւ շրջադէստի նման բան մը: «Իմ ամազոնս է ահա, խորհած էր, որ հետիոտն կուղայ» եւ սկսած էր արագ արագ վազել, սրտին բաբախումներովը չափելով տեղւոյ հեռաւորութիւնն եւ կողմնակի ճանբայ մը բռնելով, որպէս զի օրիորդէն

առաջ անցնի եւ յետոյ ետ դառնայ զայն գիմաւորելու համար: Հնարքն յաջողած էր. Բոպէր արդէն իւր ձեւերը կը փորձէր, աւելի եւս խնամօք քայլելով եւ ուշադիր լինելով իւր թեւին շարժմանց բանի որ կը մօտենար « երիտասարդ ուհւոյն » . . . երբ յանկարծ յուսախախտութեան ճիչ մ'արձաձակեց: Եկողը գիւղին երէցն էր որ կը յառաջանար հանդարտաքայլ, ժամագիրքն ընթեռնելով:

Այսպէս, առջի օրուան յուսախաբութեանցը վրայ մտածելով, Թրիւմբլօի բնակարանին առջեւ հասաւ:

Ի՞նչ կերպով ներս պիտի մտնէր, ի՞նչ անուամբ պիտի ճանչցնէր ինքզինքն: Հոն էր խնդիրը. « Բոպէր Տէթանի » կամ « Տիկին Ժաչէրի կողմէն » եւ կամ թէ « Տիկին Ժաչէրի եղբորորդին »: Յաղթական կերպարան մը պիտի առնուր թէ զուարթուն դէմք մը եւ կամ երկչոտ կերպարան մը: Հարիւրաւոր հարցումներ իրարու կը բաղձէին գլխուն մէջ, հարցումներ՝ որոց ո՛չ միոյն պատասխան չէր գտնէր, երբ նշմարեց որ ձախ կողմէն դուրս կ'ելնէր յիսունամեայ մարդ մը, բաւական գիրուկ, սպիտակ խոշոր պէտերով, կապոյտ կտուէ տաքատ մ'ու ներքնակ մը հագած: « Ինքն ըլլալու է » մտածեց: Մարդս կամ նախադիպացում կ'ունենայ եւ կամ բնու չունենար:

Երկչոտութեամբ մօտեցաւ պարոնին, եւ գլխարկը ձեռքը բռնած՝

— Պարոն Թրիւմբլօ դո՞ւք էք, հարցուց:

— Ես իսկ եմ, պատասխանեց միւսն ամբարտաւան ձայնով մը, զի՞նչ խնդրես:

— Պարոն . . . բանին կողմէ կուգամ . . . բանին եղբորորդին եմ . . . Տիկին Ժաչէր զրկեց զիս . . .

— Ժաչէր . . . փոքրիկ պառու, սիրուն. լաւ ճանաչեմ. զի՞նչ կամի:

— Ինձ յանձնար արեց այս նամակը տալ ձեզ: Եթէ հաճէիք կարդալ:

— Տո՛ւր:

Բոպէր նամակն յանձնեց.

« Քչտառակա՛ն, ըսաւ իւրովի, աւասիկ մարդ մ'որուն հետ տեսնուիլը դիւրն է: Բայց ի՞նչ եւ է . . . բաւական է որ լօգիկն հաղած չէ . . . կ'երեւի թէ՛ յարմար վայրկեանն է . . . »

Պ. Թրիւմբլօ դէ՛լ աղէկ տեղաւորեց ականոցը ըթին վրայ, խոյսձեւ գիթ մը՝ անյարմար տեսողական ո՛ր եւ է դրութեան, եւ սկսաւ կարդալ: Ընթերցման պահուն Բոպէր կը զննէր թէ պատգամագիրն ի՞նչ ներդործութիւն կ'ընէր անոր դէմքին վրայ. եւ շիտակը, տպաւորութիւնը նպաստաւոր կը թուէր, վասն զի ծերուկը կը ժպտէր ու զըլուխը կ'որորէր դո՛հ կերպարանքով մը:

« Շարունակե՛ք ընթերցումդ, չարունակե՛ք, միմիջեց Բոպէր ըթին տակէն . . . դեռ բարեմասնութեանց թուումն մասանցն ես . . . այլ երբ կարգը գայ եզրակացութեան . . . »:

Բոպէր կը խաբուէր. եզրակացութիւնն ալ բնաւ չ'այլայլեց վաղեմի վաճառականին բարեյօժար արամադրութիւնները, վասն զի ժպտուն դէմքով մը ծալլեց նամակն եւ թըղթապանակին մէջ դրաւ զայն:

— Յոյժ լա՛ւ: Բարեմասնութիւնը, ինչք, ապագայ, յարաբերութիւնը: Սիրեա՛ց դուստրն իմ: Հաճոյ է ինձ: Թէ ոչ մերժէ կամ հակակրի Շարլօթ. . . տամքդ զիւր ձեռն:

Քիչ մնաց Բոպէր ծերունոյն վիզը պիտի ցատկէր եւ իւր բազկաց մէջ խեղդէր զայն:

— Ա՛հ, պարոն, ի՞նչ ուրախութիւն:

Ձէք գիտեր ո՛րքան կը պաշտեմ ձեր աղջիկը: Մարդկանց երջանկագոյնը կ'ընէք զիս. ինչպէ՞ս յայտնեմ ձեզ շնորհակալիքս:

— Մի՛ լինիր շնորհապարտ: Պարզ ինչ է այս: Սէրն հարկադրէ: Հնազանդեցուք: Ոչինչ է պիտոյ:

— Ո՛րքան բարի էք, պարոն: Եւ այս ո՛րքան կը ընուր իմ իղձերս: Մէկ բանէ միայն կը վախնամ, այնինքն . . . դուցէ հաճելի չ'լինի՞մ ձեր օրիորդ դստեր:

— Գիտեմ այո՛: Հաճոյ թուեսցիս, զի չես տգեղ: Աղջկունք սիրեն չողորթթիլ: Յաջողեսցիս:

— Կը կրկնեմ, պարոն, թէ չեմ գիտեր ո՛ր աստիճան շնորհակալ լինիլ ձեզ: Կը խորհէի թէ վաղ անադան պիտի յօժարիք, այլ անկեղծաբար կը խոստովանիմ թէ չէի յուսար որ դործն այսքան շուտ քայլէր: Ուրեմն դուք կը հաճի՞ք խօսք բանալ Օր. Շարլօթին եւ ըսել թէ առաջին Բոպէրն որ զինքը տեսայ, պաշտեցի:

— Կամիմ ասել . . . այլ ո՛չ այժմ:

— Ինչպէ՞ս, ո՞չ այժմ:

— Այո՛, այդպէս : Հօրաքոյրդ ասէ վաղիւ մեկնիս վասն մի ամսոյ : Վերադարձիդ խօսեսցուք : Այլ մինչ ցայն վայր սկզբամբ ընդունիմ զխնդիրդ . . . Ի բաց սակայն անակնկալ պարագայք : Այլ մի՛ երկմտիր : Դեռ ժամանակ ի ձեռս է : Ծարլօթ կըրտսեր, Էսթէր անդրանիկ : Կամիմ ամուսնացնել անդրանիկն նախ քան զկրտսերն :

— Ի՞նչ կ'ըսէք, պարոն . . . ուրեմն կը մերժէ՞ք . . . : Բայց եթէ Օր. Էսթէր չ'ամուսնանայ :

— Մի՛ ինչ չափադանցեսցուք : Էսթէր սիրուն : Հեշտ է նմա եւս գտանել ամուսին : Համբերող լե՛ր :

— Այլ, պարոն . . . այդ որոշում ձեր . . . եւ իմ սէրս հարկեցուցիչ . . .

« Թշուառական, ես ալ իրեն պէս խօսիլ կ'սկսիմ » : Եւ Բոպէր բարկութենէն ոտքը գետինը զարկաւ :

— Ձեմ ըմբռներ թէ ի՞նչ լսել կ'ուզէք, պարոն : Կուգամ ձեզ յայտնել թէ կը սիրեմ ձեր աղջիկն, եւ չիտալը, եթէ չսիրէի, չէի կրնար ձեռքը խնդրելու գալ այսպէս, առանց ներկայացման, առանց բանակցութեան, բաց դաշտի վրայ : Եւ դուք ելեր ինձ կը պատասխանէք « Սպասէ՛, մինչեւ որ միւսն ամուսնայ » : Բայց եթէ մինչեւ վերջը չկարենա՞ք տեղաւորել ձեր անդրանիկ աղջիկը . . .

— Տեղաւորե՛լ . . . յոռի բառ : Որոշումս անդրուելի : Ամուսնացի Էսթէր, տամ քեզ Ծարլօթ : Ծտապեա՛լ ես : Առ զԷսթէր :

— Ա՛յո է ուրեմն ձեր վերջին խօսքը, պարոն :

— Վերջինն :

— Ուրեմն գէթ օրիորդ Ծարլօթին ներկայացուցէք զիս : Ես կը սիրեմ զինքը, բայց նա չսիրեր զիս . կրնայ լինիլ որ մինչեւ մեծ քրոջ ամուսնութիւնն, ուրիշներ գան հոս, սիրաբանեն անոր առջեւ եւ հաճոյ թուին : Գէթ թոյլ տուէք որ ինքզինքս ընտրելի առաջարկեմ . . . մինչեւ ընտրութեանց ժամն :

— Նշանուք տալովալի են եւ վտանգաւոր : Սպասեսցուք վերադարձիդ : Թէ մի ամսէն գտանիս միշտ ի նոյն պայմանս, կատարեցից : Ստացի :

— Ուրեմն, պարոն, մէկ բան կը մնայ ինձ . . . այն է շնորհակալ լինիլ ձեզ : Եթէ բոլորովին չընդունեցիք զիս, գէթ չէք ալ

մերժեր : Յոյս մը կը մնայ յիս . . . եւ յոյսը մեծ բան է :

— Ի տեսութիւն : Յարգանքս առ հօրաքոյրդ : Այցեկցից նմա :

— Ի տեսութիւն, պարոն :

Եւ Բոպէր՝ Ժաշերի ճանքան բռնեց, յանկարծական կատաղութիւն մ'զգալով որ կ'ուզէին ամուսնացնել զինքն այդ Էսթէր Թրլումբօին հետ զոր չէր ճանչնար :

Երկրորդ օրը Փարիզ մեկնեցաւ, անկից Լա-Հէ անցնելու համար . այլ սիրտն աւելի հանդարտ էր : Երկար տեսակցութիւն մ'ունեցած էր հօրաքրոջն հետ որ խոստացած էր ի դործ դնել ամեն հնարաւ որ միջոց, որպէս զի Օգթավ սիրահարի Էսթէրին եւ ամուսնութեան խնդրէ զայն : Բնականաբար այս ամենուն մէջ Բոպէրի անունը չախտի յիշուէր : Արդ, անգամ մը որ Պ. Մարուպէլ նշանուէր օրիորդ Էսթէրի հետ, միւսը (Բոպէր) իւր հօրեղբորորդւոյն պիտի յայտնէր այն սէր զոր կ'զգար կրտսեր քրոջը վրայ :

Դ.

Օգնալ Մարուպէլ առ Բոպէր Տէմանի

« Լա-Հէ, ի Դեսպանատան

« Սիրելի բարեկամս

« Ի՛նչ մեծ կորուստ որ չկրցանք այս միջոցիս երկուքս միտսին գտնուիլ ի Ժաշեր : Եւ է՞ր հարկադրեցար Հոլանտա փախչիլ ճիշդ իմ հասնելուս առջի օրը : Կենաց մէջ միշտ կան այս տեսակ հակադրութիւններ : Ի՛նչ եւ է, շատ չդանդաւորեք : Հօրաքոյրս կ'ըսէ թէ գրեթէ ամիս մը պիտի մնաս այդ տեղ եւ կրնայ լինիլ որ ատենին հասնիս այնպէս որ կարենանք երկու շաբաթ միատեղ անցունել : Երկու շաբաթն ալ բան մ'է :

« Գիտե՞ս, սիրելի Բոպէրս, որ այստեղ օր նոր, զարմանք նոր կ'ունենամ : Հօրաքոյրս, իմ գալէս ի վեր, կարծես մէկ կողմ թողած է իւր անտանիկի յօդացաւն : Կը յօժարի քիչ մը դուրս ելնել, եւ հրա՛ջք, հիւր ալ կ'ընդունի : Այսպէս ահա Ժաշերը կերպարանափոխ եղած են, և այս ճանճրոյթի տաճարը փարիզեան սրահի մը երեւոյթները կ'առնու : Հօրաքոյրս (թերեւս շատ կը խօսիմ իւր վրայ, բայց գիտցիր որ կ'օրհնեմ

զինքն այն նեղութեանց համար զորս յանձն կ'առնու ինձ զուարճութիւն մը հայթայթեալու համար) հօրաքայտ, կ'ըսէի, ծանօթացած է Թրիւմլո ընտանեաց հետ, Թրիւմլո հայր եւ Թրիւմլո օրիորդք: Երկու քոյրեր, աշխարհիս ամենէն հիանալի արարածները: Թուխ եւ մին ու միւսն՝ սեւ խոշոր աչերով եւ սիրուն ժպիտով: Խօսքը մէջերնիս մնայ, կարծեմ թէ հօրաքայտ միտք մ'ունի ինձ համար... եւ ես ալ կը թողում որ ուզածն ընէ: Ի՞նչ կ'ըսես, սիրելիս, եթէ ամուսնանալու եղեմ: Չես նեղանար, յուսամ, վստահ վրէժապէս ամենքնիս ալ օրին մէկն հոն պիտի հասնինք: Իրաւ է թէ քիչ մը պիտի փնտռենք այս երիտասարդական զուարճութիւններն յորս շարժանեայի շիջեր կը կոնծէինք, սակայն կը տեսնես թէ շամբանիայէն ալ կը հոգնի մարդս եւ կուգայ ժամ մը ուր գաւաթ մը պաղ ջրի կարօտը կը քաշենք: Չմոռնամ յարեւոյ թէ այս էսթէրն ալ սքանչելի արարած... Ի՞նչ ըսի, պարզապէս էսթէր... արդեօք սիրահարուած եմ: Ա՛յ դեռ... բայց այդ օրն ալ հեռու չէ եւ ոչ կամ կանուխ պիտի հասնի... բաւական է որ ուզես քաջալերական փորձիկ նամակ մը գրել ինձ եւ այն ատեն չեմ կարծեր թէ երկար տեւէ »:

Բոլոր Տէւանի աւ Օգիւմ Մարտապէլ
է Ժաշէր, Երջ Վալտանգիլի (Քալէաթոս)

«Սիրելիդ իմ Օքթաւի

«Նամակդ վերջին ծայր կը զարմացնէ զիս: Ըսել է թէ հօրաքայտ մարդ ամուսնացնելը բան գործ ըրե՞ր է իրեն, եւ Օր. էսթէր Թրիւմլո ալ խելքդ գլխէդ կ'առնու: Հաղիւ տեսած եմ իւր քոյրը... որ իրմէ նուազ գեղեցիկ է... կըսեն: Օր. էսթէր կատարեալ աղջկան մը համբաւ ունի: Գեղեցիկ, շնորհալի, տաղանդաւոր... միանգամայն հնչուն օժիտ մը: Իրաւ կ'ըսեմ՝ սիրելիս, ձեռքէ փախցունելիք բախտ մը չէ: Լաւ է ուղիղ... յառաջացի՛ր: Աստուած չընէ որ քու սիրային բողբ մարել ձգնիմ: Աշխարհիս վրայ պէտք է միշտ ուսանիլ: Ահա երսունիս կը մանենք. այսքան տալի արձակ համարձակ ապրեցանք. ամուսնութիւնն ալ փորձենք: Վառենք մեր եռանդը: Ինձ օրինակ եղի՛ր, դո՛ւ որ ինէ խոհական ե-

ղած ես միշտ. դուցէ ես ալ օրին մէկն հետեւիմ քու ճանքուդ: Ես միշտ այն կարծիքէն եղած եմ թէ մարդս ստեղծուած է երջանկութեան համար: Արդ, եթէ ամուսնութեան մէջ ծերանանք, երբեմն անօգուտ կը դառնանք, յաճախ տաղալիլ եւ շարունակ կը ձանձրանանք: Այլ երբ ամուսնանանք, կրնանք ինչ հաճոյ կը լինի, զաւկըններն զուարթ եւ զմեզ չըջապատողք անձնուէր: Բարեկեցութիւն կը տիրէ մեր տան մէջ, ծիծաղ մեր շուրջն, անդորրութիւն՝ ի մեզ, եւ հետեւաբար երջանկութիւն: Ամուսնանանք ուրեմն, իմ ծերուկ Օքթաւի: Քանի որ սիրտդ կը թելադրէ ըզբեզ, ճանքս ա՛յ, մի՛ յապաղիր, որպէս զի իմ ալ խելքիս փչէ ետեւէդ հասնիլ:

«Ի տեսութիւն, սիրելիս: Մի՛ մոռնար մանաւանդ օրը օրին տեղեկացնել զիս փորձիկ սիրավէտիդ... Չես կրնար երեւակայել թէ ո՛ր աստիճան կը հետաքրքրիմ »:

Օգիւմ Մարտապէլ աւ Բոլոր Տէւանի

«Շատ կոտորած է սիրտս, սիրելիդ իմ Բոլոր, թէպէտ անցեալ օրուան նամակդ մեծ հաճոյք պատճառեց ինձ եւ հիացած մնացի այն ջատագովութեան վրայ զոր ըրած էիր ամուսնութեան նկատմամբ, մանաւանդ այն պատճառաւ որ ի սկզբուն դստն հեղինութիւն մը ըղկ կ'սպասէի քեզմէ: Ամեն բան կարգին էր, երբ... բայց թո՛ղ որ սկիզբէն պատմեմ:

«Սկսած էի ուրեմն մշտաջան սիրաբանել մանկամարդ էսթէրին հետ: Քաղցրաբարոյ է՛ի իւր տալեւ, զուարթաբան, մինչեւ իսկ նրբամիտ: Հօրմէն քաջալերեալ եւ հօրքրոջմէս մղեալ կատարեալապէս կը հաւատայի թէ ամեն ինչ կարգին էր... երբ յանկարծ նշմարեցի թէ սխալ ճանքու մէջ եմ: Այո՛, բարեկամս, սխալ ճանքու մէջ: Օրիորդ էսթէր չսիրեր զիս: Յորչափ հոստարակ փաղաքշանքնիւր չապրեցի՝ իրեն ամենուն մէջ, ձայն չհանեց. այլ այն վայրկեանին երբ փորձեցի աւելի մոտեմական լեզուաւ ը խօսիլ ականջն ի վար... թէպէտ պատշաճ լեզու մը... այն տեղ կասեցուց զիս: Ատրեց խօսքս՝ անմիջապէս, վճռական բառով մը «Ո՛հ, չէ՛, պարոն, ըստու, պէտք է գիտնալ թէ ես միտք չունիմ

ամուսնանալու . Է զուր տեղը կը հոգնիք » :
 « Գործս այս վիճակին մէջ է ահա : Ի՞նչ
 ընեմ : Ե՞տ կենամ թէ յարատեւեմ : Ե՞տ ,
 երկառոյ մը հասցուր ինձ » :

Բոպէր Տէլեանի առ Օթմալ Մարտագէլ

« Յարատեւէ' :

Օթմալ Մարտագէլ առ Բոպէր Տէլեանի

« Հետեւեցայ խորհուրդիդ : Յառաջ քա-
 լեցի , բայց քալած պահուստ երկուքի բաժնու-
 եցաւ ճանքս : Ի՞նչ հարկ , ըսի ինքնին , կնոջ
 մը սէրը դրաւելու ելնել անոր կամաց հակա-
 ոակ : Էսթէր կը հպարտանայ , անկցի' ու-
 րեմն Էսթէր . . . կեցցէ' Ծարլօթ : Դիտած
 ես որ այդ Ծարլօթն հիանալի է : Աշխոյժ
 մը , հրապոյր մը , սիրուն չաղակրատութիւն
 մը : Մէկ վայրկենի մէջ գրաւեց սիրտս : Ըսի
 թէ կը պաշտեմ զինքը եւ անմիջապէս պա-
 տասխանեց ինձ նոյն ձայնով . . . « Նոյն ձայ-
 նով » ըստեմքի ձեւ մ'է : Նա բնաւ պատաս-
 խան չտուաւ , բայց գիտես առածն « ո'վ որ
 ձայն չի հաներ , կը հաւանի » : Ուրեմն Ծար-
 լօթ հաւանեցաւ . . . եւ խելքս գլխէս կը
 թռի' : Ի՞նչ կ'ըսես , չարունակե՞մ դեռ ժա-
 մանակ մը լռիկ յառաջ տանիլ սիրային մե-
 քենայութիւնս թէ անմիջապէս յայտնեմ
 ամեն բան հորաքրօջս եւ հայրիկին : Պա-
 տասխանէ' , եթէ կը հաճիս » :

Բոպէր Տէլեանի առ Օթմալ Մարտագէլ

« Բարեկամս

« Օրեր կան յորս մարդուս խելքը դու-
 խը չըլլար : Կենթադրեմ թէ յիմար մ'էի
 երբ կը գրէի վերջնութեւն նամակս որով կը
 խրատէի զքեզ ամուսնութիւնը փորձելու Ի՞նչ
 եզար որ այս պիտի կուգես անպատճառ ձեռ-
 քէ հանել աղատութիւնդ . . . Հապա իմ խել-
 քիս ի՞նչ փչեց որ չիտեթացի զառիվայրին
 ծայրը կասեցնել զքեզ իսկոյն : Բայց կը յու-
 սամ թէ վերջ մը պիտի տանք այլ եւս ա-
 մուսնութեան այս տաղտկալի փորձերուն :
 Դու փոքրիկ դաս մ'առիր որ օգտակար ե-
 ղաւ : Օրինորդ Էսթէր ցոյց տուաւ քեզ սրտի
 այն չորութիւնն որուն ընդունակ կրնայ լի-
 նիլ մանկամարդ աղջիկ մը : Յուսամ թէ չը-

պիտի ուզես ուրիշ պատրանքներ փնտռել
 Ծարլօթի հետ : Կանգ առնուի՞ր հասած
 տեղերնիս : Մանաւանդ որ ընտանեկան
 կեանքն ալ այնքան զուարթ չէ : Կինդ որ
 իւր հազարումէկ կամքերը քաղցնել կ'ու-
 ղէ , տղաքդ որ կուլան , ծառայներդ որ
 կը գողնան : Երջանիկ ենք , ազատ ենք այ-
 ժմ : Գնտակ չ'կապենք ոտքերնուս : Խը-
 ղենք շղթայն եւ բացը նետուինք : Ազատէ'
 օձիքդ , շուտ ազատէ յուշկապարիկէն , խը-
 ցէ' ականջներդ , դոցէ' աչքերդ եւ վազէ'
 եկուր Փարիզ . . . խնջոյից մէջ ապրելու :
 Ամենէն աւելի , չըլլայ որ ամուսնանաս
 Ծարլօթի հետ , ապա թէ ոչ այլ եւս երեսս
 չես տեսներ կեանքիդ մէջ » :

Օթմալ Մարտագէլ առ Բոպէր Տէլեանի

« Դիտեցի՞ր , սիրելիս , որ սքանչելի կեր-
 պիւ կը փաստաբանես թէ' թեր եւ թէ
 դէմ : Վերջին նամակդ պարզապէս առաջ-
 նոյն հակադարձն է : Ձեմ ճանչնար որ
 քեզ չափ վարպետ ըլլայ իւր ըրած առար-
 կութիւնն հերքելու , այդչափ նրբու-
 թեամբ : Նախ զիս առաջ մըլէլ յետոյ , այ-
 ժմ կը փորձես կասեցունել : Վա՛յ ինձ ,
 սիրելիս , վասն զի ալ ուշ է , եւ առաջ նեւ-
 ուած եմ :

« Արդ , անգամ մը որ համոզուեցայ թէ
 դեղանին Ծարլօթ կը սիրէր զիս փոքր ինչ
 (փոքր ինչ կ'ըսեմ , պարկեշտութեան հա-
 մար) խօսք բացի հորաքրօջս : Ահ , բարե-
 կամս , տեսնելու էիր ի՞նչպէս բորբոքեցաւ :

« — Բայց այդ չըլլար , Օղթալ : Որո՞վ
 իրաւամբ կ'ուզես գլխէ հանել այդ մանկա-
 մարդ աղջիկը :

« — Ի՞նչ կ'ըսես , գլխէ հանէ' : Կը սի-
 րէ : զայն , յայտնեցի թէ հետն ամուսնա-
 նալ կը փափաքեմ եւ պատասխանեց թէ
 իւր ուզածն ալ այդ է : Միթէ աշխարհի
 ամենէն պարկեշտ միջոցը չէ՞ այս : Արդէն ,
 հորաքրօջս , պէտք չէ որ դանդաղափս , քա-
 նի որ ամուսնութեան խօսքն առաջին ան-
 գամ դու բացիր ինձ :

« — Այո' , Էսթէրի հետ . իսկ Ծարլօթին
 համար , բնաւ :

« — Ծարլօթն է եղբեր կամ Էսթէրը .
 քեզ ի՞նչ փոյթ :

« — Ընդհակառակն այնքան փոյթս է որ

երբէք չպիտի հաւանիմ Պ. Թրիւմբօի դիմել իւր Դարլօթ աղջկան ձեռքը քեզ համար խնդրելու :

« — Բայց, հօրաքոյրս, չեմ հասկնար թէ ի՞նչ ըսել կ'ուզես :

« — Մի՛ պնդեր :

« — Սակայն պատճառը :

« — Մի՛ պնդեր, ըսի : Եւ եթէ կ'ուզես մեծ վիշտ մը չպատճառել ինձ . . . ամուսնացի՛ր Էսթէրին հետ կամ բնաւ մի՛ ամուսնանար : Վերջապէս, կարճ խօսքով, Դարլօթը մ'առնուր :

« Դուրաւ մնացի . . . եւ պատճառը կար : Կ'զգաս անշուշտ, բարեկամս, թէ ո՛րքան դժուար էր ինձ հօրաքոյրս հակառակիլ : Սակայն սէրն յաղթող է միշտ . . . ուստի որոշմանս հետեւեցայ : Մի՛ այպաներ զիս թեթեւութեամբ : Օրին մէկն, երբ դու ալ սիրես, ինձ պէս պիտի վարուիս :

« Թրիւմբօի սպասաւորներէն մին ձեռք բերի եւ զաղտնաբար սա քանի մը բառերը զրկեցի Դարլօթին : — « Այսօր իսկ կ'ուզեմ « ձեր հօրը երթալ եւ ձեռքերնիդ խնդրել : Կը հաւանիք » : Ժամ մը վերջը պատասխանեց ինձ, կապոյտ կապարով եւ իմ թղթիս ետին գրելով սա բառերը . « Ինչո՞ւ « ինձ կը հարցնէք բան մը զոր դուք չատ « լաւ գիտէք » : Այլ եւս վարանելու տեղի չէր մնար :

« Աւստի գնացի գտնել Պ. Թրիւմբօն : Պարտիզին մէջ էր, կապոյտ կտաւէ հագնուած, եւ գէշ խոտեր հանելու զբաղած :

« — Պարոն Թրիւմբօ, կը սիրեմ ձեր աղջիկը :

« — Յոյժ լաւ : Բարեմասնութիւնք, ինչք, ապագայ, յարաբերութիւնք : Սիրեաց դուստրն իմ : Հաճոյ է ինձ : Թէ ոչ մերժէ կամ հակակրի Էսթէր . . . տամ քեզ զիւր ձեռն :

« — Բայց ես Օր. Էսթէրին հետ ամուսնանալ չեմ ուզեր, այլ Օր. Դարլօթին հետ :

« — Զայդ ո՛չ կարեմ : Խօսեցեալ է արդէն :

« — Խօսեցեալ : Անշուշտ մէկու մը զոր չ'սիրէր, վասն զի նա զիս կը սիրէ եւ յայտնեց ինձ :

« — Այլ է խնդիրն : Դու զնա սիրես եւ նա զքեզ : Դնորհեմ քեզ :

« — Ահ, պարոն, որքան երախտապարտ եմ ձեզ : Թո՛յլ տուէք որ ես առաջինը լինիմ ձեր հաւանութիւնն իրեն աւետող :

« — Այլ ո՛չ այժմ :

« — Ի՞նչ պատճառաւ :

« — Դարլօթ կրտսեր, Էսթէր անդրանիկ : Կամիմ ամուսնացնել անդրանիկն նախ քան զկրտսերն :

« — Բայց, պարոն, այդ անկարելի է : Իմ սէրս այնքան բուռն է որ չեմ կրնար համբերել . . .

« — Որոշումս անդրդուելի : Ամուսնացի Էսթէր, տամ քեզ զԴարլօթ : Դտապեալ ես, ա՛ն ուրեմն զԷսթէր :

« Գործերն այս վիճակին մէջ են ահա, սիրելի բարեկամս : Կը սիրեմ . . . եւ իմ սիրածս ինձ պատկանելէ առաջ, պէտք է որ միւսը՝ զոր չեմ սիրեր, տեղաւորուի :

« Ձեմ ըսեր թէ դժուարին խնդիր, վասն զի Էսթէր գեղեցիկ է, յոյժ գեղեցիկ . բայց գիտես թէ մէկ երկու օրուան մէջ ամուսնութիւն չըլլար . . . եւ պիտի հարկադրիմ դեռ երկար սպասել : Արդ, ինքզինքս կը լալեմ, եւ այս պահուս միակ փափագ մը ունիմ, ամուսնացնել Էսթէրն : Կարծեմ պաշտօնդ կը լրանայ այս օրերս, եկուր չուտ : Գու խորհրդ ողջ պէտք ունիմ, եւ ո՛ր գիտէ, գուցէ Էսթէր հաճոյ թուի քեզ : Աքանչելի աղջիկ մ'է . թերեւս դու ալ անոր հաճոյ երեւիս . . . եւ յայնժամ . . . Ոհ, ի՞նչ աղւոր բան կ'ըլլայ : Երկու քոյրերն առնուլ . . . մենք որ գրեթէ եղբայր կը սեպուինք :

« Դու՛տ եկուր, Բոպէր, չո՛ւտ եկուր . . . եւ ջանա՛ որ ամուսնանաս մեծին հետ, որպէս զի ես ալ կրտսեր քոյրն առնում » :

Ե.

— Տէ՛ր Աստուած, Օգթա՛վ, այս ի՞նչ էր ըրիր . գէշ չեմ կամենար քեզ եւ իրաւունք ալ չունիմ գէշ կամենալու : Սիրող խօսեցաւ . . . եւ չկրցար ինքզինքդ զսպել բայց չխտակն ըսելով չատ կը ցաւիմ որ դէպքերն այս կերպարանքն առին : Ո՛հ, այս չէր բնաւ իմ նպատակս, եւ Դարլօթի հետ ըու ամուսնութիւնդ այնքան վիշտ կը պատճառէ ինձ որքան որ ուրախութիւն պիտի պատ-

ճառէր ամուսնութիւնդ Էսթէրի հետ :

— Ամուսնութիւն մի՛ ըսեր, հօրաքոյրս, առ առաւելն նշանաւոր մը : Ի՞նչ այլանդակ դադափար է որ ունի այդ Պ. Թրիւմֆօն որ չ'օժտարի իւր կրտսեր աղջկան ամուսնութեան, մինչեւ որ մեծը չ'կարգուի : Անձնահաճութիւն է այս պարզապէս, եւ կամ ես խօսք չեմ հասկնար : Բարեբաղդաբար, հօրաքոյրս, հնարք մը խորհեցայ :

— Ի՞նչ է տեսնենք :

— Բոպէրին գրեցի որ ջանայ հաճոյ երեւիլ Էսթէրին . . . եւ հետն ամուսնանայ, որպէս զի ես ալ իմ կարգիս կարենամ Շարլօթին առնուլ :

— Այդ բանը գրեցի՞ր Բոպէրին :

— Չգրեւի ի՞նչ կայ որ :

— Շատ ձախող հարուած մը տուի որուն : Բայց, տնայէն, եթէ այսքան ժամանակ ես կ'աշխատիմ Շարլօթէն պաղեցունել զբեզ, պատճառն այն է որ . . . Բոպէր կը սիրէ զայն : Եւ Բոպէրը Շարլօթին հետ կարենալ ամուսնացնելու համար է որ զբեզ դէպի Էսթէր կը մղեմ : Ըսել է հիմա սքանչելի դիրքի մը մէջ ենք : Բոպէր պիտի դա՞յ :

— Այո՛ :

— Ի՞նչ երեսով դէմը պիտի ելնենք : Խեղճ տղայ :

— Թող առաջուց խմացունէիր ինձ, հօրաքոյրս : Եթէ գիտնայի որ Շարլօթը կը սիրէր, կ'զգուշանայի : Այժմ ժամանակն անցած է այլ եւս : Ո՛հ, այո՛, հիմա կը յիշեմ թէ ի՞նչ պատճառաւ հակասական նամակներ գրեց ինձ : Ի՞նչպէս պիտի ընդունիմ զինքը . լաւագոյն է որ անմիջապէս մեկնիմ : Եղբւրթիւնը դո՛ւ խմացուր իրեն, հօրաքոյրս :

— Բայց դու արդէն գրով յայտնած ես ամեն բան :

— Իրաւունք ունիս : Բայց ի՞նչ միջոց գործածենք, ի՞նչ ճանքայ բռնենք :

— Ամենէն կարճը, պէտք է երթալ ձեռքը սեղմել . . . եւ ոչինչ ըսել : Նա պիտի հասկնայ ամեն բան :

— Ուրիշ ճար չ'իյ . ցաւակցական մեծարանք մ'ըսել կուզէք, ինչպէս կ'ընեն թաղմանց ժամանակ : Ի՞նչ եւ է . . . ձեռքէս եկածը կ'ընեմ :

Բոպէր հասնելուն պէս իսկոյն վերա-

հասաւ եղաւ տխուր լրոյն ստուգութեան Օգթավ կը սիրէր Վճարլօթ, կը սիրուէր անկից . . . եւ իրեն ուրիշ բան չէր մնար բայց եթէ հեռանալ Որքան ալ զօրաւոր էր իւր վիշտը, բաւական կարողութիւն կ'ըզգար յանձին զայն չմատնելու համար : Այնպէս մը կեղծեց թէ կը խոնարհէր իրաց վիճակին առջեւ, որպէս զի չխանդարէ իւր հօրեղբորորդւոյն ուրախութիւնը կամ հօրաքոյրը սիրտը խոցէ . . . միանգամայն քիչ մ'ալ հպարտութենէ մղեալ . սիրոյ վերքերն այն վէրքերէն են զորս կը ծածկենք ամեն աչքերէ :

Իսկ սրտին խորէն, դառնապէս խոցուած էր Բոպէր, եւ քաջ գիտէր թէ իւր այդ վէրքն յաւիտեան չպիտի դոցուի :

Այլ ջանար չմտածել այլ եւս մանկամարդ աղջկան վրայ, անունը բերանը չէր առնուր եւ հոգ կը տանէր որ ճանքան չհանդիպի անոր :

Գիշերն ի լոյս անըուն կանցունէր եւ առաւօտուն, աքաղաղին երգոց հետ, կ'ենէր դաշտերն ի վեր ընթանալ, յուսալով որ մարմնական հոգնութիւնն ամոքէ բարոյական տանջանքները :

Բնականաբար կ'զգուշանար իւր բայերն ուղղել դէպ յայն խրճիթ ուր տեսած էր Վճարլօթ եւ միշտ հակառակ կողմը կ'ընթանար, այսինքն հիւսիսային բեւեռէն :

Օր մը երբ կ'երթար այսպէս, գլուխը կախ եւ տխուր խոհերու մէջ թաղուած, ձիու մը ոտից թռիւիւնէն սթափեցաւ . Շարլօթն էր :

Քայլերը փութացուց, ջանալով որ դէմ առ դէմ չ'գտնուի . սակայն մանկամարդ աղջիկը ճանչցաւ զայն եւ ձիուն գլուխը դէպի երիտասարդը դարձնելով,

— Ինչո՞ւ դիս չէք բարեւեր, պարոն, ըսաւ : Որովհետեւ անցեալ տարի հետս քիչ մը ընտանեբար վարուեցաք, միթէ ադիկայ պատճա՞ռ մ'է որ քաղաքավարութիւնը ձեռքէ հանէք այսօր :

Եւ հեգնական կերպով մը կը ծիծաղէր :

— Ներողամտութիւննիդ կը հայցեմ, օրիորդ . կ'երկնչէի որ չ'խանդարեմ զձեզ : Առաւօտեան պտոյտներն այնքան օգտակար են անոյշ մտածութեանց . . . եւ աշխարհիս մէջ ո՛չ մէկ բանի փոխարէն չեմ ուզեր խըլել զձեզ ձեր նշանածի երազներէն . . .

— Նշանածի երազներ, ըսիք . . . ու-

րեմն կը փորձէք վրայօքս տեղեկութիւններ առնուլ բերնէս : Զեմ մեղադրեր զձեզ , վասն զի ես ալ ձեր վրայօք տեղեկութիւններ առի : Պարոն Բոպէր Տէթանին էք եղեր , այնպէս չէ՞ , տիկին Ժաչէրի եղբորորդին :

— Այո՛ . . . տիկին Ժաչէրի եղբորորդին . . . եւ Օթթալ Մարուաղէլի հորեղբորորդին . . .

— Պ. Օթթալ Մարուաղէլ , սիրուն տղայ մը . . . որ երջանիկ պիտի ընէ իւր կինը :

— Այդպէս ըլլալուն համազում եմ , օրիորդ . արդէն անպիտանին մէկը պիտի նկատէի զայն , եթէ երջանիկ չընէր զձեզ այնպէս որպէս արժանի էք :

— Ի՞նչ համար կ'ըսէք . . .

Եւ մանկամարդ աղջիկն՝ առանց խօսքն աւարտելու , երեսը դարձուց խնդալը բռնելու համար :

Բոպէր՝ որուն աչքէն վրիպած չէր այս չարժուամբ ,

— Զեմ կարծեր թէ , օրիորդ , յարեց , ձեր ծիծաղը չարժեւում աստիճան գռեհիկ խօսք մ'արտասանած լինիմ : Եթէ չկրցայ արժանանալ ձեր սիրոյն , գէթ իրաւունք ունիմ , կարծեմ , ձեր կարեկցութեան Մերժուիլ , ինչ է է , բայց անարգութիւն ու ծաղրութիւն , երբէք :

Այս խօսքերուն վրայ մանկամարդ աղջիկը չկրցաւ ինքզինքը զսպել եւ սկսաւ ծիծաղել , զուարթ , սիրուն , ջինջ ձայնով մը :

— Ահ , ծիծաղելի է այս , շատ ծիծաղելի :

Բոպէր շուտրած մնացած էր , չէր դիտէր ի՛նչ կերպարանք առնուր : Խեղճուկ մը կեցած , դուրսը կախ , աննշան՝ այդ գեղանի ամազոնին առջեւ որ գոգցես իւր հետ զուարճանալ կ'ուզէր , փափաք մը կ'զգար փախչելու , յանկարծ անհետանալու : Պահ մը փորձուեցաւ կռնակը դարձունել խօսակցին եւ ճանբան չարունակել առանց պատասխանելու . սակայն անձնասիրութիւնն յաղթեց :

— Յաւելով կը տեսնեմ , օրիորդ , ըսաւ , որ ոչինչ կատարելագործեալ է այս աշխարհիս վրայ , եւ եթէ ողորմածութիւն բառը կը նշանակէ օգնել չքաւորին , չնշանակէր սակայն ողորմիլ թշուառաց : Զեռքս մերժեցիք . միթէ պատճառ մ'է այս որ ձեր ծաղուց ներքեւ ընկճէք զիս :

— Դո՛ւք իմ ձեռքս խնդրեցիք : Ահա՛ զէ՞ք , պարոն : Դուք բոլոր ձեռքը խնդրեցիք , որ նախամեծար սեպեց զՊ. Օթթալ Մարուաղէլ՝ ձեր հօրեղբորորդին . . . : Այս բանին մէջ ես ի՞նչ յանցանք ունիմ :

— Զեր քոյրը . . . ես ձեր քոյրն ամուսնութեան խնդրեցի . . . ապա ուրեմն դուք Շարլօթը չէ՞ք . . .

— Իմ անունս Էսթէր է , պարոն , ձեր խոնարհ աղախինը :

— Հիմա խելքիս կուգայ . . . բայց դուք չըսի՞ք ինձ . . . երբ առաջին օրը ձեզ հանգիպեցայ . . . թէ . . .

— Աին փոփոխական է :

— Զիս ծաղրելու ելած էք , բայց կ'ուզեմ վերջ մը տալ այդ կատակներուն : Այս ամենուն մէջ դատելիք մը կայ : Պէտք է բացատրութիւն տաք ինձ , օրիորդ , ես կը պահանջեմ այդ բացատրութիւնն : Ինձ ըսիք թէ Շարլօթ էր ձեր անունը . . .

Ծնծաղը մարեցաւ յանկարծ մանկամարդ աղջկան շրթանցը վրայ , եւ լուրջ ձայնով մը , փոքր ինչ յուզեալ .

— Տէ՛ր Աստուած . . . յարեց , պէտք է զրուցել թէ , պարոն , դուք երիտասարդեդ՝ ամեն անգամ որ մանկամարդ աղջկան մը դեմ գտնուիք՝ իրաւունք ունենալ կը կարծէք սիրային յայտարարութիւններ ուղղելու . . . որք յաճախ վտանգաւոր կը լինին : Աստուած մը ինձ հանդիպեցաք , եւ հինգ վայրկեան չանցած , սկսաք ըսել թէ կը պաշտէիք զիս : Միթէ պարտաւոր էի հաւատալ ձեզ անշուշտ ոչ : Ապա , պատրուակելով թէ իմ մէկ բարեգործութեանս մասնակից եղած էիք , անունս դիտնալ ուզեցիք . կրնամ ըսել բռնութեամբ պահանջեցիք զայն : Գիտէ՞ք ինչ խորհեցայ : Ուզեցի որ սխալ տեղեկութեամբ մը վրայէս նետեմ այն տաղտկացուցիչ սիրաբանութիւնները որով կըրնայիք ընկճել զիս : Այս կերպով դուցէ անսացի այն երկիւղի զգացման զոր ազդած էր ինձ ձեր անակնկալ յանդգնութիւնը : Ուրիշ բան մ'ալ ըսեմ : Այն կինը որուն տան մէջ տեսաք զիս , իմ աղքատս չէր : Ես հոն գնացած էի քրոջս կողմէ՝ որ նոյն օրն հիւանդ էր , ձեռք մը հադուստ տանելու խեղճին : Դուք իմ ողորմածութիւնս կը գովաբանէիք . . . մինչ այն պարագային մէջ ողոր-

մածութիւնն իմն չէր : Կ'ուզէիք ձեր բոլոր աղքատներն ինձ համար աղօթել տալ . տիեզերական խմբերդ մը կազմել որուն շարժառիթը ես պիտի լինէի : Զձեզ խաբելով, արդեօք ուզեցի ինձ խոստացած օրհնութիւննիդ բրոջս գլխուն վրայ հրաւիրել . քմհաճոյքի՞ մը հնազանդեցայ, երկիւղի՞ մը, աւելորդ ապաշտութեան՞ մը, չեմ յիշեր : Սա միայն գիտեմ թէ Շարլօթ իմ քոյրս, եւ Էսթէրն ես եմ : Եւ տեսէք ո՞ր աստիճան զգայլ եղայ : Մեր տեսակցութեան երկրորդ օրը ձեռքս կը խնդրէիք : Եթէ բուն անունս գիտցած ըլլայիք, ըստ որում անդրանիկն ես եմ, հայրս զիս պիտի տար ձեզ կնութեան : Եւ դուքէս այս վայրկենիս, զըզլացած ըլլայիք . . .

— Բայց այժմ կը տեսնէք որ կըսալաւեմ զձեզ : Ըսէ՛ք ուրեմն թէ դուք ալ չէք տեսեր զիս . . . Եւ ամեն ինչ կը լիննայ :

Եւ Բոպէր՝ իբր թէ խօսքն աւարտելու համար, ուզեց Շարլօթի ձեռքը բռնել եւ համրոյրներով ծածկել զայն . բայց նա՛ ետ քաշուելով, մարակեց Մէտէրիքն . . . Եւ առաջին անգամուան նման Բոպէր առանձին մնաց անտառին մէջ, ակնապիչ գիտելով գեղանի ամառնոն որ կ'աներեւութանար ի հեռուստ :

Պահ մը մնաց ծառի մը յենած, իբր մարդ մը որ յանկարծ գինովութիւնը կը թափէ : Ասլա, սփոփիչ երկար հաւաջ մ'արձակելով, դղեակին ճանքան ձեռք առաւ : Բոպէր լի էր յուսով : Այո՛ . . . Էսթէր կը սիրէր զինքը . . . ապա թէ ոչ չպիտի փախչէր այսքան շուտ :

2.

— Բայց, սիրելի Օքթավա, տղայութիւն չուզեր . ինչո՞ւ դէմքդ այդպէս կախած ես : Շարլօթ երբէք դադրած չէ զքեզ սիրելէ, ինչպէս կ'ենթադրեմ :

— Ո՛չ . . . ընդհակառակն : Բայց ես շատ հեռի եմ իմ երազացս կատարն հասնելէ : Էսթէր ամուսնացած չէ դեռ . . .

— Եթէ այդ է վիշադ, միթարուէ՛ : Ես անձս քեզ համար դրած եմ : Եւ որպէս զի մութացուի այդ ամուսնութիւնն՝ որուն այնքան փափաղող ես, կը հաւանիմ Էսթէրին հետ ամուսնանալ : Մօրաքոյրս, կ'ուզե՞ս այսօր իսկ պաշտօնապէս երթալ իւր ձեռքը խնդրել ինձ համար :

— Ա՛հ, տղաս, սքանչելի է այդ ըրածըդ, գեղեցիկ, վեհանձն բան : Անձդ զոհե՛լ հօրեղբորդուդ համար :

— Ո՛չ, Բոպէր, ես չեմ համարձակիր ընդունիլ այդ տեսակ զոհողութիւն մը :

— Թո՛ղ որ այնպէս ընեմ . . . չիտակն ըսելով Օր . Էսթէրն ալ նետուելու աղջիկ չէ : Ասկից զատ, պարտաւոր եմ քեզ ծառայութիւն մը մատուցանել :

— Ի՞նչպէս յայտնեմ քեզ շնորհակալիքս :

— Մի՛ շնորհակալ ըլլար : Շատ բնական է որոշումս . . . Եւ եթէ իմ տեղս դու ըլլայիր . . . ուրիշ կերպ չպիտի վարուէիր :

ԺԻՒԼԻԵՆ ՊԵՐ ՏԸ ԹԻԻՐԻՔ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՊԵՐՍՏԻՆ Ի ԳԱՂԱԻԱ ՄՏՆԵԼՈՒՍ ՊԱՀՈՒՆ

Ո՞վ կըրնայ դուշակել այս պահուս, յոր գուցէ Աստուած ալ Սըխալի :

Թէ անւոյն նըսեմ կողմ, եթէ կողմ պատրաստ է մեզ դառնալ Սըխալի :

Ի՞նչ է այն որ պիտի ելնէ դուրս ձեռքերէդ ի թագուն, ճակտագիր :

Միթէ՞ ստուեր վատչուէր եւ ձախող, աստղիկըն թէ այգուն Լուսալիր :

Ի նոյն ժամ թէ՛ լաւը թէ՛ յոռին հարկ կըզգամ տեսներոյ ,
Սե՛ւ պատկեր ,
Զի Գաղղիոյ՝ Աւստերլից , եւ կայսեր պետութեան՝ Վադէրլօ
Արժան էր :

Ես կուգամ միւսանգամ կը մըտնեմ , ո՛վ Բարիզ , պատերուդ
Ի սուրբ ծոց ,
Քեզ դարձեալ կը բերեմ զհոգին վառ՝ ոչ երբէք չիջանուտ
Տարագրոց :

Ըստ որում ժամ է արդ որ լինիմք եռանդով դործելու
Ձեռնամուխ ,
Արտաքուստ ջաղխելու զինձ գոռոզ եւ ներքուստ ճըղմելու
Իժին գլուխ ,

Ըստ որում սին պատրանքն անկարող չըլացնել զաչ մեր սէգ
Կը վըլրի ,
Ըստ որում մեր ոչ մին է ի մահ անվեհեր և՛ ոչ ի վէգ
Անարի ,

Ըստ որում կը տեսնեմք զայդ նըսեմ հըզօրին յերկնից գահ
Նոր ծագել ,
Ըստ որում ամեն ինչ մեր առաջ վառք է արդ կամ թէ մահ
Անարգել ,

Ըստ որում այսօր դեռ կը հոսի սեւ արեան , այրին տունք ,
Օ՛ր վըսեմ ,
Ըստ որում վայրկեան է ուր վատեր կ'ընկըրկին դողդոջունք ,
Կը վազեմ :

Եւ ահա իմ պահանջ , երբ օտարն արշաւէ ի սահման
Մեր երկրին .
Իշխողին մաս չըտալ մեր ուժէն , ըովանդակ զոհել զան
Վըտանդին :

Ըստ որում այս ոսոխք , դեռ հիւրեր երեկի , մեր միջեւ
Են մըտած ,
Պիտի գամ , ո՛վ Գաղղիա , պիտ' իյնամ յանցանացըդ առջեւ
Գետնամած :

Քամահրեմ պիտի ես նոցա երգ , սեւ արծւոյն ըզժանիս
Մարտագոռ ,
Պիտ' ուզեմ քենէ , մա՛յր , ցաւերդ գիմ բաժին , ես՝ որդիս
Այլեւոր :

Կատաղի , յարգութեամբ պաշտելով նախատինքդ , թուքումուր ,
Քու խոր սուգ ,
Ո՛հ , պիտի համբուրեմ քու ոտքեր , ո՛վ Գաղղիա , յահկունա հուր
Եւ արտառք :

Տես , Գաղղիա , տես թէ այս խաւարած հէգ գըլուխ միշտ տածէր
Մեծ հաւատ ,
Տես եթէ հողւոյն մէջ ոչ իմիք խորհուրդներ կ'ըմտածէր
Քենէ գատ :

Ներէ ինձ որ լինիմ, խաւարէ ելնելուս ի պահուն
 Քու զաւակ,
 Եւ մինչդեռ կը խընդան սա կոյտ մի վատ մարդիկ, ի՛նչ բըծուն
 Յաղթանակ,
 Անօգուտ մի՛ դատեր որ պաղենեմ քեզ երկիր ակնածու
 Մաղթանօք՝
 Շըլացած անըկուն քու ճակտէդ, ուր շողայ արեւու
 Ելք փառօք :
 Էր երբեմն, խառնակեաց օրերուդ, յորս գոհ մարդ փայլ ունի
 Ոչ հաւատ,
 Նըման կարծր ու չորցած սստերու, ճարճատմամբ ուր վառի
 Մեծ հըրատ,
 Երբոր դու պերճանօք, յաղթութեամբք, երազօք գինարբու
 Պարէիր,
 Երգէիր, նըշաւակ հաշտ բաղդին փառաւոր սուտերու
 Անյարիր :
 Յայնժամ երբ տօնական օրերուդ տաւղին ձայն կը հընչէր
 Հեռուէն,
 Ո՛վ Բարիդ, ես փախայ, ինչպէս որ Տիւրոսէն կը փախչէր
 Մարդարէն :
 Երբ կայսեր տէրութիւնն ի Գոմօր փոխած էր ըզլուտեա
 Դա՛ռն, դըժխեմ,
 Ես թըռայ ահագին տըխրութեամբ ընդ ալիս վէտ ի վէտ
 Ծովաճեմ :
 Հոն, յաղեաս, լըսելով քու երգեր, քու ցընորք, զաղաղակ
 Խառնադ ոչ,
 Պերճանացդ, երազոյդ, ծիծաղիդ դէմ կայի շարունակ
 Ներող ոչ :
 Բայց այսօր որ նըսեմ ամբօխիւն քու վըրադ կ'արձակի
 Ատտիղա,
 Այսօր որ համօրէն աշխարհը քու շուրջ կը խորտակի,
 Ես ահա՛ :
 Ո՛վ Գաղղիս, ի ժամուն որ ըզքեզ գեւարան կը քաշեն
 Մազերէդ,
 Ո՛վ մայր իմ, կ'ուզեմ ես ալ տանիլ զիմ օղակ ամրաշէն
 Շըղթայէդ :
 Կը վազեմ, ըստ որում հըրանօթք թըրին վրադ յեղակարծ
 Ռումբ, գընտակ,
 Դու պիտի տեսնես զիս ի պատնէշս կամ յոտին կամ պառկած
 Նահատակ :
 Եւ դուցէ հողիդ վրայ, ուր իբրեւ ջահ պայծառ շողայ յոյս,
 Ո՛վ մայր իմ,
 Աըսորիս փախարէն դու պիտի շնորհես ինձ ի մահուս
 Մի չիրիմ :

Ք Ա Ղ Ո Ի Ա Յ

ՀԱՐԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

29 ՅՈՒՆԻՍ - 5 ՅՈՒԼԻՍ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Պրէքէնսրի զօրավարը Ֆաթմէն կը հեռագրէ թէ Հանտէքէն վաճառական մը յուլիս 8 թուական նամակաւ մը ծանուցած է իրեն թէ Մէհտին մեռած է : Նոյն նամակը կը յաւելու թէ Մէհտիի կուսակիցներն իրարու հետ կը պատերազմին :

Այս լուրը կը հաստատուի նաև փախստական եգիպտացի զինուորէ մը որ Ֆաթմէն հասած է :

— Լոնտրայէն յուլիս 3/15 թիւ հեռագիր մը կը յայտնէ թէ Պորսայի մէջ գիւններն ինկան՝ Ռուսաց զէպ ի Զիւլֆիքար յառաջանալու լուրին պատճառաւ . այդ լուրն հրատարակեց Թայմսը :

Երեսփոխանաց ժողովոյն մէջ, Լորտ Ռանտոլֆ Զըրչիլ, այս մասին հարցման մը պատասխանելով, ըսաւ թէ Րիճէուէյ դընդապետն արդարեւ իմացած է այդ պրոյց, այլ ստոյգ բան մը չկայ :

— Ֆրանսայի Երեսփ. ժողովը քուէարկեց օրէնք մը, որուն համեմատ կառավարութիւնը կը ստանձնէ սնուցանել և կրթել ամեն չքաւոր ընտանեաց եօթներորդ դասակը, 6 տարեկանէն վեր : Այսպէս 50,000 տղայ կան, որոց մէկ երրորդ կամ չորրորդ մասն՝ յոյժ կարօտ ընտանեաց : Կառավարութիւնն առաջին տարին 400 000 Փր. ծախք ընել արտօնեալ է :

— Պիզմարը իշխանն և Քալմըքի Կոմսն ի մօտոյ խորհրդակցութիւն մը պիտի ունենան Գերմանիոյ և Աւստրո-Հունգարիոյ յարաբերութեանց վրայ :

— Պուլիարիոյ իշխանն, որ Տարմէզատ հանդիպելէ յետոյ Լոնտոն պիտի երթայ ներկայ գտնուելու իւր եղբոր ամուսնութեան ընդ Պէտղրիս իշխանուհւոյն Անգլիոյ, Վիէննա հասաւ անցեալ հինգշաբթի, ուր կը մնայ երեք օր :

— Ֆրանսական կառավարութիւնը, թէեւ 20,000 Փրանք միայն ստացած էր Վիքդոր Հիւկոյի յուղարկաւորութեան ծախուց հա-

մար, իրօք 101,000 Փր. ծախք ըրած լինելով, Երեսփ. ժողովէն կը խնդրէ փաւերացունել տարբերութիւնը :

— Ըստ պաշտօնական վիճակագրութեան, Ֆրանսա ունի այժմ 51 000 ըլլամէդր երկաթուղիք, որք տարին 180,000,000 ճամբորդ կը փոխադրեն, և մէկ երկրիկոն (միւեաւ) և 150 միլիոն Փր. խառն հասոյթ կուտան . 225,000 անձինք կը ծառայեն այս երկաթուղեաց վրայ, որոցմէ կառավարութիւնը կը ստանայ 83 միլիոն Փրանքի զուտ հասոյթ մը : Առաջին Փրանսական երկաթուղին, Բարիլէ ի Սէն-ժէրմէն, շինուեցաւ 50 տարի առաջ : Պ. Թիէր յայնժամ հակառակեցաւ երկաթուղոյն շինութեան, «տղու խաղալիկ» և «երեւակայական բան» համարելով զայն : Բարիլ պիտի ունենայ ընդերկրեայ երկաթուղի մը, որոյ ծրագիրը մատուցուեցաւ Երեսփոխանութեան :

— Սըր Տըլմէնտ Ուոլֆի պաշտօնը վերջնապէս որոշուած չի կրնար համարուիլ, զի Խորհրդարանին մէջ մասնաւոր վիճաբանութիւն մը պիտի լինի այս նկատմամբ : Սըր Ուոլֆ՝ իբրեւ երկու Պանքաներու տնօրէն կամ մատակարար՝ դրամական շահեր ունեցած է յեգիտոտոս : Խաիվ Թէվֆիզ փաշայի դէմ Սըր Ուոլֆ ամբաստանութիւն ըրած էր թէ մեղսակից է Ալեքսանդրիոյ ջարդերուն, թէև երբեք չէր կրցած ապացուցանել զայս : Լորտ Ռանտոլֆ Զըրչիլ եւս նոյն ամբաստանութիւնն ըրած էր Ն. Բարձրութեան դէմ :

— Անգլիոյ Երեսփ. ժողովոյն յուլիս 8ի նստին մէջ Լորտ Ռանտոլֆ Զըրչիլ պարսաւեց Տոնկոլայի պարպումն, այս բանին համար պատասխանատու նկատելով նախորդ նախարարութիւնն, որոյ արարքն ընդունել պարտաւոր է ըսաւ արդի նախարարութիւնը :

— Պելլիքատէն կը հեռագրեն թէ Սերպլադիրք, պատասխանելով ուռս մամուլին յօդուածոց ի մասին սերպ կառավարութեան արդի քաղաքականութեան, կ'ըսեն թէ Սերպլիոյ արդի քաղաքականութիւնն հարկաւոր հետեւանքն է կատարեալ իրողութեանց և այն դառն փորձառութեանց զորս Սերպլիա Ռուսիոյ կողմէ ստացաւ վերջին երկու պատերազմաց վրայ :

— Լոնտրայի լրոց նայելով նոր Կապոյտ

Տեորակին ընթերցումէն կ'երեւի թէ զօրաւար Լորտ Ուոլլի պարսաւած է Տոնկուլայի պարպումը . բայց նոր նախարարութիւնըն, յետ ուշի ուշով քննելոյ զայս խնդիր, հարկ համարած է ետ չառնուլ նախորդ նախարարութեան տուած հրամանը :

— Լոնդոն, 8 յուլիս . Թայֆլին Բեդրուպուրկի Թղթակիցը կը ծանուցանէ թէ, Մուրզապի ուստական գծերէն եկած լրոց նայելով, Աֆղան զօրքերը նորէն կը համախմբին վիճաբանեալ սահմանագծին վրայ : Տեղւոյն վրայ գտնուող Ռուսաց կարծեօք, Էմիրն որոշած է առաջին առթիւ վրէժ լուծել Բէնշէհի պարտութեան համար :

Ն Ե Ր Ք Ի Ն

Բամազանը լրացաւ այս կիրակի եւ Պայրամի հանդէսք մեծ չքով կատարուեցան երկուշաբթի օր :

— Հօպարթ փաշա՝ որ ժամանակէ մ'ի վեր Լոնտրա կը գտնուէր, շաբթուս մայրաքաղաքս եկաւ :

— Թաքէի մէջ հետեւեալը կը կարգանք ծխախոտի գնոյն բարձրացման առթիւ .

« Բէժիի գործարանէն ելնող ծխախոտի և Կէլէթներու գիները քանի մ'օրէ ի վեր յաւելում մը կրեցին : Ընկերութեան այդ որոշումը բաւական վնասակար է ծխախոտ գործածող աղքատաց համար և պատճառ չ'կար այդ յաւելման . բայց որովհետեւ Բէժի շահակցական է, կսպասենք որ թէ՛ կայսերական կառավարութիւնն և թէ՛ Ընկերութիւնը պաշտօնապէս բացատրեն այն պատճառներ որք այդպիսի յաւելման մը հարկն յառաջ բերին :

« Բէժիի Ընկերութիւնն արդէն մինչեւ ցարդ շատ մտահոգութիւն պատճառած է հողագործ դասուն և կը զարմանանք թէ այժմ եւս ընդհանուր հասարակութեան զայրոյթ պատճառող այսպիսի որոշում մը ի գործ կը դնէ » :

— Զօրավար Հօպ փաշա պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին յանձնել այն չորս ընտիր նժոյգներ զորս Գերմանիոյ Կայսրն իւր ձեռօք նուէր զրկած է Ն. Վեհափառութեան :

— Հանգուցեալ Մուսթաֆա Ֆաղըլ փաշա, ի որդի՝ իշխան Իպրահիմ փաշա շաբթուս մէջ մայրաքաղաքս եկաւ : Ն. Վեհափառութիւնը Վեհ. Սուլթանին ընծայելու համար ութ հարիւր կտորի չափ հնութիւններ բերած է Եգիպտոսէն :

Կ'ըսուի թէ ասոնց մէջ կը գտնուին այնպիսի արձաններ և ձփաներ, որոց նմանը չգտնուիր նոյն իսկ Եւրոպիոյ ամենաճոխ թանգարանաց մէջ . ասոնք դեռ մաքսատունն են և այս օրերս պիտի հանուին կայսերական պալատը փոխադրուելու համար :

— Սրեւեւեան Բումէլիի կուսակալ Կավրիէլ փաշա այսօր կամ վաղը Փիլիպէէն ճանրայ կ'ելնէ տիկնոջն հետ մայրաքաղաքս գալու համար, ուր ամբարն մէկ ամիսը պիտի անցունէ Արնավուտ գիւղի ամարանոցին մէջ :

— Օսմանեան ծառայութեան մէջ գտնուող գերմանացի սպայից՝ Բահլէր, Բամբովէնէր, Բիսթով և Հօպ փաշաներու պաշտօնավարութեանց պայմանաժամը լրացաւ յունիս 1ին :

Կ'իմանանք թէ յառաջիկային կ'ընքելի պայմանագրութեանց մասին համաձայնութիւն գոյացեր է այժմէն այդ սպայից և կայսերական կառավարութեան միջեւ, և Վեհ. Սուլթանն հրամայեր է որ պայմանագրութիւնը վերանորոգուին Պայրամի տօնէն անմիջապէս յետոյ :

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Ազգ. Երեսփախանական ժողովին գումարե-
լով Երէկ ընդ նախագահութեամբ Ս. Պատ-
րիարք Հօր, մերժեց Քաղաքական ժողովոյ
Յ անդամոց հրաժարականներն, յանձնարա-
րարելով իւր Ս. Նախագահին որ կոչումը
նէ անոնց ազգասիրութեան եւ հրաւիրէ
ստանձնել իրենց յանձնուած պաշտօնն,
Ապա, ինչ ինչ բարեփոխութեամբք ընդու-
նեց Կեդր. ուղղակի տրոց ծրագիրն և 1885-
86 տարւոյ ելմտացոյցը. լիազօրութիւն
տուաւ Երուսաղէմայ պարտուց բարձման
Յանձնաժողովին՝ որ կարգեալ է Կեդր. վար-
չութենէն եւ զոր ժողովն պիտի վերակաղ-
մէ յաջորդ նստին, գաղտնի քուէարկու-
թեամբ:

— Ներսէս վարժապետեան Ուսում-
նարանի Կարգադիր Յանձնաժողովին
300 ոսկւոյ նոր վճարում մ'ըրաւ
Ղալաթիոյ Կալուածոց Հոգաբար-
ձութեան, ի հաշիւ կալուածական
պարտուց վճարման յաւկացեալ 1700
ոսկւոյն:

Վերոյիշեալ 300 ոսկւոյ գումարը
նուիրող Մեծ. ազգայինք են,

	Օսմ. սակ
Մ. Յ. Յակոբեան եղբարք Էֆէնտիք	200
Կիւմիւշկէրտան » »	50
Մանուկեան » »	50

Օսմ. ոսկի 500

— Ուսմ. Կոմիտէի Թղթակիցն յիշեալ
թերթի 176 համարի մէջ նամակ մը
հրատարակած է յորում կը յայտնէ թէ
Մշակի խմբագիր Պ. Գրիգոր Արծրունի
Տփղիս վերադարձած է շարունակելու
համար իւր թերթի հրատարակումը:

«Մշակը տեղւոյս զարգացեալ հայ հա-
սարակութեան միակ կանոնաւոր թերթն
է, կ'ըսէ Ռուսի Կոմիտէի Թղթակիցը, բայց
դժբաղդաբար նորա խմբագիրը տասն եւ
մէկ տարուան տաժանելի աշխատութենէ
վերջ բոլորովին զրկուեցաւ իւր նիւթական
հարստութենէն եւ անորոշ կացութեան են-
թարկուելուն համար պարտաւորուեցաւ եւ
րոպա գնալ առ ժամանակ դադարեցնելով

Մշակի հրատարակութիւնը: Ժողովրդեան
լուսաւորութեան համար իւր ամբողջ հա-
րստութիւնը զոհող մարդը իւր թշուառու-
թեան մէջ բոլորովին մոռցուեցաւ կեղծա-
ւոր եւ խարդախ Էմիլիէնցիայէն: Բայց
Արծրունի չ'լուսեցաւ իւր նպատակէն—աշ-
խատիլ ժողովրդեան օգտին: Անկարելի է
յաջողութիւն չ'մտղթել այնպիսի ազնիւ
գործիչի մը:

— Երեւանէն կը գրեն մեզ թէ Ռու-
սիոյ Կայսեր սենեկապետ Կոնչարով որ
Կաւկասիա գնացած էր դատաստանա-
կան դործերը քննելու համար, պաշ-
տօնանկ ըրած է Երեւանի դատարանի
դատախազ Պ. Փրէյզմանգ, որ հանրա-
ժանօթ է Երեւանայ աքսորելոց դէպ-
քին մէջ:

— Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ շինու-
թեան Յանձնաժողովն իւր առաջին նիստն
ըրաւ այս հինգ զարթի, Ղալաթիոյ Մատե-
նագարանին մէջ և իւր դիւանը կազմեց
հետեւեալ կերպով.

Նախագահ Մկրտչէլ Էֆ.	Յակոբեան
Արեւադէս Միհրան »	Սէթեան
Արեւադէս Աւետիս »	Հարենց
Գրանդապոս Պետրոս »	Գարակէօղեան
Համարակալ Եղիա »	Շահապեան
Անդամք Տիգրան »	Բարաղամեան
» Մկրտիչ »	Այշրճեան
» Ռաբիկ »	Մինասեան

Ժողովն որոշեց որո՞ծին դիւրութեանն
համար պատուաւոր թաղեցիներէ օժան-
դակներ առնել եւ ասոր համար իրենց պաշ-
տօններուն մէջ վերահաստատեց այն երկու
մասնախումբերն, որոնց մին շինութեան
հսկելու և միւրը Սամաթիոյ մէջ հանգա-
նակութիւնը շարունակելու պաշտօնն ստանձ-
նած էր արդէն:

Շինութեան հսկող անձինք են.
Մ. Գէորգ Էֆէնտի Գասպարեան
Մ. Յարութիւն » Ոսկերիչ
Աւուլահ » Բլատեան
» » Մանուկեան
Յակոբ » Վարդանեան
Հանդանակութեան համար Սամաթիոյ
մէջ օժանդակ անձանք են.

Մ. Յարութիւն Էֆէնտի	Անտօնեան
Սարգիս »	Յովսէփեան
Յովսէփ »	Սրմաքէչեան
Նշան »	Ալեանաբեան
Մկրտիչ »	Մելքոնեան

(ՇԱՔԱՐՈՎ ՊԱՏԱԾ)

Հ Ե Յ Տ Ո Ք Ի ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐ

Աւասիկ ընդհանուր բժշկութեան զարմանալի և տրտալարեղ դիւտ մը : Գիտութեան յաղթանակները — Ելեկտրական չեռագիրք, Շոգի, Տաքաբուծիւն — յեղափոխեցին երկրագնդիս գրուածքը, և մարդկային կեանքն ըրին լուսագոյն և իմաստանադոյն : Այսպէս, թէպէտ անհամար Գեղահատներ կան հիւանդութեանց համար, և մեծ արժանիք վերաբեղով հանդերձ անոնց, Տաքթոր Հէյտորի դիւտը նսեմացուցած է անոնց ամենքն և հիմնած է

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Բժիշկը, որոց պատուիրած օրական ջորս կամ հինգ գեղահատները կը տկարացնեն ստամոքսը եւ կ'անդամալուծեն աղիքները, պիտի կրնան իրենց հիւանդոց տուողը թիւն և ախորժակ տալ այս տրտալարեղ Գեղահատներէն մէկ երկուքով : ՏՈՔԻՍ ՆԵՅՏՈՔԻ ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐԸ մէկ երկու համար կը բաւեն դնելու համար ստամոքսն կտտորեալ կանոնաւորութեան և ախորժակի մէջ, և միտքն պայծառ ու թեթեւ ընելու : Եթէ փայծեղնը տկարացած է իւր գործին մէջ, կը կաղ-դուրի, և եթէ Ձիւլային դրութիւնը խանգարուած է, կը վերակազմուի :

ՄԱՂՁՈՏՈՒԹԻՒՆ ՆՇԱՆՔ

1. Ստամոքսի ծանրութիւն :
2. Աղետաց տարածումն փք-տխտի պատճառաւ :
3. Սրտացաւութիւն :
4. Ճաշէն յետոյ տկարութիւն և յոգնութիւն :
5. Բերքին մէջ գէշ հոտ մը և ծանր լեզու :
6. Որովայնի պնդութիւն, մերթ ընդ մերթ ալ փորհարութիւն :
7. Գլխու ջրաւ ճակտի վրայ :
8. Ախորժակի պակսութիւն և մեծ յոգնութիւն :

Վերջինչեալ ամեն նշանները բացորոշապէս ցոյց կուտան թէ խանգարում յառաջ եկած է փայծեղնի մէջ, եւ որ լինի անմիջական և ազդու դարման մը ընդդէմ մաղձոտութեան : Մեծ հաւատ չունիմ լուծողական դեղերու վրայ, ուստի եւ շինեցի Գեղահատ մը որ զօրաւոր եւ ազդու դարման մ'է, եւ կոչեցի



պէտք է յիշել թէ մեծ կարեւորութիւն ունի սխալ կերպիւ չըմբռնել հիւանդին ճիշդ կացութիւնը : Պէտք է անմիջապէս

ՓԱՅԾԵՂՆԻ ԿԱԶԳՈՒՐԻԶ մը հայթայթել, որ գեղահատի մը ամենէն սովորական ձեւն է : Ամենօրեայ փորձառութիւնը ցոյց կուտայ թէ եթէ գեղահատը լաւ կերպիւ բաղադրեալ է, ամենայնոր մար կերպիւ կրնայ վերանորոգել փայծեղնի գործողութիւնը, և այդ մասին կարելի է միշտ վստահութիւն ունենալ : Իմ կենացս բազմաթիւ տարիները նուիրած եմ շինելու համար Գեղահատ մը որ հաւատ չունիմ լուծողական դեղերու վրայ, ուստի եւ շինեցի Գեղահատ մը որ զօրաւոր եւ ազդու դարման մ'է, եւ կոչեցի

ՀԵՅՏՈՔԻ ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏ

Առողջութեան խկութիւնն իսկ էն, եւ այն մեծագոյն շնորհն զոր Գիտութիւնն ըրած է մարդկութեան :

Ձլախտութեան, Անգորովութեան, Ընդհանուր յոգնութեան, Ախորժակի պակասութեան, Գլխացաւութեան համար, Տաքթոր Հէյտորի Նոր փայծեղնի գեղահատերն ամենազդու դարմանն են :

Մէն մի սրուակ կը պարունակէ քսան գեղահատ : Գինն է 25 օկնիթ : Լը ծախուի ամեն գեղալաւաւագ քով :

Տարակուսող անձինք կրնան, փորձի համար, ՋՐԻՍԲՈՒ ստանալ այս Գեղահատներէն սրուակ մը, եթէ մեզ զրկեն իրենց անուռն եւ հասցեն :

Թղթատարական տոմս մը զրկել « փայծեղնն եւ իւր դաղանիքը » խորագրով տետրակին : Հարկ եղած տեղեկութիւնները կը արուի ամենուր :

ՀԵՅՏՈՔ ԵՆ ԸՆԿ.

Նիւ-Եորք, Մ. Ն.

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ — Լը խնդրուի գեղալաւաւներէն ուշադրութիւն ընել որ ճ. Հ. Ջրանսիսի, որ միակ Գործակաւորն է, ստորագրութիւնը դրուած լինի : Հակառակ պարագայի մէջ, գեղահատները կեղծ են :

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ


ՀՐԴԵՀԻԴԻՄ

ՌԸԼԻԷՆԱ

Ծովային ապահովագրութիւն : — Դիմել առ գործակաւորն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուլթալ, Եօրկիտաիւս խան Պահչէ — գարու, Պոլիս. կամ Ղալաթիա, Ալէքսիտաի խան թիւ 15 :

ԼՈՅԹԸՆ ԵՒ ՉԻՍՆԵԼ ՄԹԵՐԱՆՈՅ ԵՐ ԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԵԱՅ

ՔԻՒՐՔՃԻ ԳԱՔՈՒՍԸ, ՂԱԼԱԹԻԱ



«ՕՐԻԱՆ» Մականուանեալ հնձող մեքենայն երկու ձիով կը քաշուի և կը կընէ 300 օխա :

ԳԻՆ՝ 35 ՕՍՄ. ՈՍԿԻ Է

Մեքենային կատարելագործութիւնը երաշխաւորեալ է : Գնողըն երբ գոհ չիլինի, կրնայ ետ առնուլ իւր ստակն :

302

1885 ՏՈՐԻՈՅ ՊԱՐԶ ՕՐԱՅՈՅՅՆ ԵՒ ԸՆԴՈՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՅՆ այժմէն պատրաստուելու վրայ լինելով, առեւտրական, արհեստական եւ ուրիշ ծանուցումներ այսօրուքնէ կ'ընդունուին :

Առաջնոյն համար, որ 40,000 օրինակ կը ծախուի, ծանուցմունք պէտք է ղրկուին մինչեւ Յունիսի վերջն, եւ երկրորդին համար՝ որ 6000 օրինակ կը ծախուի, մինչեւ Յուլիսի վերջը :

Դիմել առ Գարեգին Էֆ. Պաղտատւեան, հրատարակիչ այդ օրացուցից, Պոլիս, Չաքմաքճըլար, 13, Յակօրեան խան :

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՅՅԵՏՈՄՍԵՐՈՒ

Կը պատրաստուի ազնիւ քարտերու վրայ ամեն լեղուաւ գեղեցիկ գրերով, 100 հատը 10 ղուրուշ :

Դիմել առ Գարեգին Էֆ. Պաղտատւեան, Չաքմաքճըլար, Յակօրեան խան թիւ 13 :

ԻՆՆԵՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՀՐԱՆ ԷՖԷՆՏԻ ԱՐԵԿԵԱՆԻ

ԹՈՒՐԳԵՐԷՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Ով որ կ'ուզէ ինքն իրեն սովորել հետազայ չորս բաներն՝

1. Ընթերցանութիւն Տաճկերէն այլ և այլ ձեռագրոց :

2. Ուղղագրութիւն :

3. Հարադատ թարգմանութիւն :

4. Խմբագրութիւն պաշտօնական և ոչպաշտօնական այլ և այլ գրուածոց, ինչպէս ժուրնալ, պայմանագիր, պէրսոնալ, էքոնոմիկ, և այլն :

Թող հայթայթէ մի հատ սոյն գրքէն որ դարձեալ հեղինակին գործերէն՝ Կ. տիպ թրքատառ ձեռագիր կիւլտէսթէին հայերէն տրտասանութիւնն է, և ի վերջոյ կը պարունակէ բառգրքոյկ մը և բաղուժ պատուանդաններ և այլք :

Կը ծախուի ամեն հայ գրավաճառաց և ջրավաճառ Պօղոս և Յակօր աղայից քով ի գին 7 ղուրուշ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՂԷՔՍԱՆԴՐ Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՇՈՂԵՐ ՈՒ ՅՈՂԵՐ

Պատանէկան Բանաստեղծութիւնս

Երիտասարդ բերթողին զանազան բանաստեղծութեանց հաւաքածոյն է սա, պատկերազարդ չքեղ տպագրութեամբ իւր ընծայեալ Պէրսէրեան Տպարանէն : Կը պարունակէ իբր նախարան Օտեան էֆէնտիի մէկ իմաստալի նամակն, 30 ի չափ առակներ, մանկական բանաստեղծութիւններ, չորս թարգմանութիւններ Հիւկոյէն, և այլ բաղմաթիւ բերթուածներ այլ և այլ նիւթերու վրայ գրուած : Պարգեւաբաշխութեանց ատեն իբր մրցանակ տրուելու ամենայար մօր գիրք մ'է :

Գինն է 10-ղրշ : Կը ծախուի Ղալսթիա, Յակօր Արշակ էֆէնտիի թղթավաճառանոցն եւ Պոլսոյ հայ գրավաճառաց քով :

Սրտօնատէր՝

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵԿԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ